Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

13356
13357
13358
13359
13360
342
Ц-23

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

1863

342(=91.39)

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑԵԱԼ

ՅԱՏԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒԹԵԱՆ

Ի 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՅ

**1863**

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ, ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՅՐՔ ԵՒ ՏԵԱՌՔ

1860 Մայիս 24ին ազգովին հաստատուած Սահմանադրութիւնը մեր Օգոստափառ Ինքնակալէն հանդերձ վերաքննութեամբ վաւերանալով, այս տարուան Մարտ 17ին դարձեալ Ազգիս շնորհուելէն ետքը, առաջինին տրամադրութեանց համեմատ կազմուած Ազգային Ընդհանուր ժողովը՝ նոյն ամսոյն 23 ին՝ վաւերացեալ Սահմանադրութեան գործադրութիւնը յանձնեց Յանձնաժողովի մը, որուն անդամներն ընտրելու համար գաղտնի քուէարկութիւն ըրաւ սա պայմաններով:

1° Յանձնաժողովի ընտրութեան Քուէհամարի արդիւնքը մէկ քանի օր բաց մնայ. և եթէ ընտրելոց մէջէն օրինաւոր պատճառաւ հրաժարող գտնուի, անկէ անմիջապէս ետքը առաւելագոյն քուէ առնող անձը՝ հրաժարողին յաջորդ առնուի:

2° Յանձնաժողովն իր պաշտօնը Պատրիարքական Տեղապահ Սրբազանին նախագահութեամբը կատարէ:

3° Յանձնաժողովը կարևոր գտած ատեն՝ Բարձրագոյն Դրան և Ազգային Յանձնաժողովներուն դիմելու. և կարծիք կամ խորհուրդ խնդրելու արտօնութիւն ունենայ. և յիշեալ Յանձնաժողովները այնպիսի պարագայից մէջ իրենց աջակցութիւնը չզլանան Գործադիր Յանձնաժողովին:

*Մարտի 25 ին ընտրութեան Քուէհամարը կատարուեցաւ . և անոր արդեամքը Գործադիր Յանձնաժողովի անդամ հրատարակուեցան*

| | | |
|---|---|---|
| 1 · *Ստեփան պէյ Ասլանեան* | ՔՈՒԷ | 69 |
| 2 · *Մկրտիչ աղա Աղաթօն* | „ | 67 |
| 3 · *Յովհաննէս էֆէնտի Միւրէնեան* | „ | 52 |
| 4 · *Վարդերէս աղա Մխաքեան* | „ | 47 |
| 5 · *Գրիգոր էֆէնտի Մարկոսեան* | „ | 42 |
| 6 · *Ալթուն Տիւրրի էֆէնտի* | „ | 40 |
| 7 · *Յովակիմ աղա Նէվրուզեան* | „ | 39 |
| 8 · *Մարտիրոս աղա Միւհէնտիսեան* | „ | 32 |
| 9 · *Պօղոս աղա Աշնանեան* | „ | 29 |
| 10 · *Կիրակ Թորոս պէյ* | „ | 29 |

*Անմիջապէս Աղաթօն Մկրտիչ աղան , Միւրէնեան Յօհաննէս էֆէնտին և Աշնանեան Պօղոս աղան հրաժարական մատուցին Նախագահ Սրբազանին . բայց միւս անդամները իրենց պաշտօնին յանձնառու ըլլալով , եօթը հոգի ամբողջ առաջին անգամ ժողովուելնուն ( մարտ 29 ) , որոշեցին հրաժարելոց կրկին հրաւէր գրել , և աշխատիլ համոզել որ իրենց ընկերակցութենէն չզրկեն Յանձնաժողովը . և առանց ժամանակ կորուսնելու Յանձնաժողովին Ատենապետ ընտրեցին գաղանի քուէարկութեամբ Ասլանեան Ստեփան Պէյը , և Ատենադպիր կարգեցին Ազգային Դիւանապետ Գ . Ամուրեանը , և Յանձնաժողովին պաշտօնին վերաբերեալ գործոց զանազան Մասնաժողովներ կարգեցին Թարգմանութեան , պարգ-րութեան , Թաղական և Երեսփոխանական ու Գաւառական տնօրէնութեանց են ։*

*Հրաժարեալ ժողովականներէն Աղաթօնեան Մկրտիչ աղան օրինաւոր պատճառ յայտնելով հրաժարականը կրկնեց ։ Բայց Միւրէնեան Յօհաննէս էֆէնտին*

և Աշնանեան Պօղոս աղան Յանձնաժողովին հրաւէրին միտ դնելով, ներկայ գտնուեցան երկրորդ գումարման (ապրիլ 2), և միւս անդամներուն հետ խորհուրդի մասնակցելով հրաժարականնին ետ առածի պէս երեւցան։

Բայց երրորդ ժողովին՝ (ապրիլ 12) Յանձնաժողովը ցաւօք սրտի տեսաւ երկուքին ալ երկրորդ անգամ գրով հրաժարականը. և անոնցմէ զատ Մինաքեան Վարդերես աղայի բանի— միայն հրաժարելուն լուրը։

Այս պարագային մէջ Յանձնաժողովին մնացեալ վեց անդամները Տեղապահ Սրբազանի նախագահութեամբ չորրորդ անգամ ատեան կազմելով, Սահմանադրութեան գործադրութեան նկատմամբ բռնուելիք ընթացքին վրայ խորհուրդ ըրին, և թէ իրենց անդամակցաց հրաժարականի խնդրոյն վրայ, թէ վերոյիշեալ գործադրութեան եղանակին վրայ Բ. Դրան և Ազգային Յանձնաժողովներուն կարծիքն առնելու համար երկու օր ետքը (ապրիլ 14) Համախորհուրդ ժողովի հրաւիրեցին երկուքն ալ։

Եկան Յանձնաժողովներուն երկուքէն ալ բաւական անձինք. և Գործադիր Յանձնաժողովէն հրաժարեալ Աղաթօն Մկրտիչ և Աշնանեան Պօղոս աղաներն նոյն օրը ներկայ գտնուեցան ժողովին. և վերոյիշեալ խնդրոց վրայ խորհուրդ ըլլալով, Աղաթօն Մկրտիչ աղան երրորդ անգամ հրաժարական տուաւ, և անոր տեղ Սալանեան Մանուկ աղան Յանձնաժողովի անդամ հրատարակել որոշուեցաւ, վասն զի նա էր Յանձնաժողովի 10 անդամներէն անմիջապէս ետքը առաւելագոյն քուէ առացողը։ Իսկ Աշնանեան Պօղոս աղան իր երկրորդ հրաժարականը ետ առնել շնորհ ըրաւ և կրկին յարեցաւ Յանձնաժողովի ընկերակցացը։ Մնաց Միւրէնեան Էֆէնտին որ ներկայ չէր, և իր հրաժարական գիրն ալ պայման դրած ըլլալով որ « Բ. Դրան Յանձնաժողովը Գործադիր Յանձնաժողովին անդամակցութեամբ

Սահմանադրութեան գործադրութեանը կ՚աշխատին, ինչպէս ալ յանձն կ՚առնէ նոյն Յանձնաժողովին մէջ մըտնել, ապա թէ ոչ կը հրաժարի »։ նոյն պայմանը Բ. Դրան Յանձնաժողովին մերժուելուն համար հրաժարականը ընդունել հարկ եղաւ ։ Իսկ Վարդերես աղան նոյն օրերը ճանապարհորդութեամբ տարակայ գըտնուելով, պատեհութիւն չեղաւ իրեն հետ կրկին թղթակցել, և վերջը Յանձնաժողովին նորընտիր անդամ Նորատեան Մանուկ աղան լուր բերաւ որ հրաժարականին վրայ միշտ պինդ կը կենայ, թէպէտ և մինչև ցայսօր գրով չ՚յայտնեց իր կամքը ։

Այսպէս Յանձնաժողովը տասն անդամներէն վեցի իջաւ, և վերջը ութի ելաւ, և անկէ ետքը մնաց ութ անդամով, և մինչև ցայսօր իր պաշտօնը վարեց միայն ութ անդամով, միշտ տասնին մեծագոյն մասին ներկայութեամբ՝ այսինքն գոնէ վեց հոգիով ատեան կազմելով, և Տեղապահ Սրբազան Հօր նախագահութեամբ գործ տեսնելով ։

Սկսինք ուրեմն Յանձնաժողովին տեսած գործերը յայտագրել ։

## Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Յանձնաժողովը իր պաշտօնը ըստ օրինի կատարելու համար, կը պարտաւորէր ամէն բանէ առաջ Սահմանադրութիւնը տպագրութեամբ հրատարակել ։ Բայց որովհետև Բ. Դրան և Ազգային Յանձնաժողովներուն կայսերական կառավարութեան ներկայացուցած Հայ և Տաճիկ բնագիրը չէր կրցեր գտնուիլ, և Բ. Դրան Ազգին շնորհած օրինակը միայն Տաճկերէն ըլլալով, այն օրերը շտապաւ գրեթէ բոլորովին նորէն թարգմանուած էր Հայերէնի ․ և որովհետև Տաճկերէնի բնագրին մէջ բաւական գրչի սխալներ սպրդած էին,

Գործ․ Յանձնաժողովը պարտաւորեցաւ մէկ կողմէն բնագրին գրչի սխալները ուղղել, և Բ․ Դրան սրբագրութեանը մատուցանել, և միւս կողմէն Հայերէն Թարգմանութիւնը Տաճկերէնին հաւատարմաբար համաձայնել տալով, տպագրութեամբ 'ի լոյս ընծայել։ Այս ամէնը Մասնաժողովն մի ձեռօք կատարուեցաւ․ և Թէպէտ Տաճկերէնի սրբագրութեան և Հայերէնի Թարգմանութեան ու երկու լեզուաւ տըպագրութեան պատճառաւ գործը երկարեցաւ, բայց վերջապէս Յանձնաժողովն մայիս 15 ին Ազգիս ընծայեց Սահմանադրութեան տպագրեալ օրինակը՝ կայսերական խաթ նշանով շքեղացեալ, և Բ․ Դռնէն սրբագրուած Տաճկերէն բնագիրը՝ Արտաքին գործոց պաշտօնարանի կնքով վաւերացեալ, զոր Յանձնաժողովը յանձնեց Ազգային Պատրիարքարանի՝ որպէս զի խնամով պահուի Դիւանատան մէջ։

Այս Յանձնաժողովը պարտ կը համարի յայտնել որ Բ․ Դրան շնորհած բնագիրը Սահմանադրութեան առաջին յօդուածէն սկսեալ մինչև 99դ յօդուածը՝ բոլոր կանոնները կը պարունակէ, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ տպագրուած է Տաճկերէն բարբառով և Հայկական գրով Հայերէն Թարգմանութեան դէմը։ Իսկ Տպագրեալ օրինակին մէջ սոյն կանոններէն առաջ գրուած 1° Արտաքին գործոց Տեսչութեան կողմէն առ Պատրիարքական Տեղապահ ուղղեալ նամակը, 2° Բ․ Դըրան և Ազգային Յանձնաժողովներուն առ Կայսերական Կառավարութիւն մատուցած Յայտագիրը, 3° Բ․ Դրան հրամանագիրը, 4° Յառաջաբանութիւնը և 5° Սահմանադրութեան հիմնական սկզբունքը, Բ․ Դըրան և Ազգային Յանձնաժողովներուն խորհրդով՝ Գործադիր Յանձնաժողովը պատշաճ դատեց հրատարակել, և կանոններուն պէս երկու լեզուաւ դէմ առ դէմ կարգադրելով Սահմանադրութեան սկիզբը տպագրել։

## Գ․ ՅԱՏԱԿԱԳԻԾ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Այսպէս Սահմանադրութեան սրբագրութեան, Թարգմանութեան և տպագրութեան զբաղած ատեն, Գործադիր Յանձնաժողովը միանգամայն անոր գործադրութեան միջոցներն ալ հայթայթելու ձեռք զարկաւ։

Ինչ ընթացք բռնել հարկ էր որ Սահմանադրութեան գործադրութիւնը օրինաւորութեամբ, խաղաղութեամբ և շուտով կատարուի։

Այս էր այն ծանրակշիռ խնդիրը զոր լուծելու համար Յանձնաժողովն սկսած օրէն խորհելու սկսաւ, որուն համար երկրորդ նիստին իր անդամներուն մէջ կարծեաց անհամաձայնութիւն ծագեցաւ, և չորրորդ նիստին Համախորհուրդ Ժողով ընել հարկադրեցաւ։

Յանձնաժողովը Սահմանադրական Վարչութեան մէջ սա երկու գլխաւոր տրամադրութիւնները նշմարեց։ 1° Ամէն Թաղի մէջ Թաղական Վարչութիւն պիտի հաստատուի որուն Մատակարար կամ լաւ ևս Տնօրէն Խորհուրդը Թաղեցւոց ընդհանուր և ազատ քուէարկութեամբը պիտի ընտրուի, և Թաղեցւոց ամէն տեսակ ազգային գործերուն տնօրէնութեան՝ և մինչև անգամ Թաղական տուրք հաստատելու իրաւասութիւն պիտի ունենայ։ 2° Պատրիարքական Վարչութիւն մը պիտի հաստատուի, որուն գլուխն ու Ժողովները՝ Երեսփոխանական Ընդհանուր Ժողովով պիտի ընտրուին, և Երեսփոխանները Թաղական կամ Գաւառական Վարչութեան ձեռօք՝ Կ. Պոլսոյ մէջ Երեսփոխանական ընտրող կոչուած կարգ մը մարդիկներէ, և գաւառներուն մէջ Գաւառական Ընդհանուր Ժողովներէն պիտի ընտրուին։ Իսկ որովհետև Կ. Պոլսոյ մէջ ոչ Պատրիարքական վարչութեան գլուխն ու Ժողովները կային, և ոչ Թաղական վարչութեան օրինաւոր խորհուրդներ, ուս-

տի հարկ 'ի վերայ կար երկուքն ալ ընտրել, և երկուքն ալ հաստատել: Բայց որը առաջ և որը ետքը:

Յանձնաժողովը ամէն բանէ աւել օրինաւորութեան միտ դնելով խորհրդածեց որ եթէ առանց Թաղական օրինաւոր վարչութիւն ունենալու Երեսփոխանական ընտրութեանց ձեռնարկութիւն ըլլայ, դժուարութենէն զատ՝ օրինաւորութեան մասին Վարչութեան հիմն 'ի վերայ աւազոյ կանգնած պիտի ըլլայ: Արդարև ո՞վ պիտի ընտրէ զԵրեսփոխանները, Այն ամեն ազգայինք որ 25 տարին լրացուցած և Օսմանեան հպատակ են, ու ընտրութեան իրաւունքէն դատաստանապէս զրկուած չ'ըլլալէն զատ՝ կամ տարին գոնէ 75 ղուռուշ Ազգային ընդհանուր տուրք կը վճարեն և կամ անձնական արժանեաց տէր ըլլալով՝ ընտրութեան կը մասնակցին, թէ և տարեկան տուրք վճարելու կարողութիւննին 75 ղուռուշի չ'հասնի: Ո՞վ պիտի զատէ այս ընտրողները. Թաղական խորհուրդը՝ Թաղին մէկ քանի պատուաւոր բնակիչներուն հետ Քարոզչին նախագահութեամբը Ընտրողական ժողով կազմելով: Ո՞վ պիտի անօրինէ և հսկէ ընտրական գործողութեանց որ Սահմանադրութեան մէջ 20ի մօտ յօդուածներ կը պարունակէ. դարձեալ նոյն Խորհուրդը նոյն Ժողովին կերպարանօք (Տես Սահմանադրութեան Յօդ. 71): Ուրեմն պէտք է նախ Թաղական խորհուրդ ունենալ, որ ապա Երեսփոխանական օրինաւոր ընտրութեան հնար ըլլայ: Ասոր վրայ Յանձնաժողովին բոլոր անդամներն համամիտ էին: Բայց երբ խնդրոյն հետևութեանը գալով հարցուեցաւ թէ գտնուած Թաղական գործակալներուն կրնա՞յ մի ըստ օրինի յանձնուիլ այս փափուկ պաշտօնը. երկու տարբեր կարծիք երևան ելան:

Յանձնաժողովին անդամոց մեծ մասը դիտողութիւն կ'ընէր որ արդի Թաղական գործակալները,

մէկ քանի փոքրիկ և պատուաւոր բացառու-
թեամբ՝ ընդհանրապէս անյարմար են այս գործին․
վասն զի ասոնցմէ խիստ քիչը նախկին Թաղական ընտ-
րութիւններէն մնացած օրինաւորապէս պաշտօն վա-
րող խորհուրդներ են․ շատը՝ Առժամանակեայ
Վարչութեան կողմէն կարգեալ Առժամանակեայ Թա-
ղական գործակալներ են, և դժբաղդաբար ամեն տեղ
Թաղեցւոց համակրութիւնը և վստահութիւնը չեն
վայելեր․ Թող որ կայ՝ ուր բնաւ իսկ Թաղական չկայ
ոչ կանոնաւոր խորհուրդ և ոչ Առժամանակեայ գոր-
ծակալ ։ Այս վիճակին մէջ առանց Երեսփոխանական
ընտրութեան տնօրէնութիւն յանձնել խոհեմութիւն չէ․
վասն զի Երեսփոխանական ընտրող զատել, ընտրելի ո-
րոշել և Քուէարկութիւն ու Քուէհամար ընել, այն-
պիսի փափուկ գործեր են, որ կատարողին կողմէն ան-
նախանձ ջանք, նախազգոյշ խոհեմութիւն և արդա-
րադատ ընտրութիւն կը պահանջեն․ ժողովուրդին կող-
մէն ալ՝ վստահութեան և հնազանդութեան կը կարօ-
տին ։ Ասոնք ամէնը՝ գործին դժուարութեան, և Թա-
ղականաց կարողութեան վրայ․ ո՛ւր Թողունք օրինա-
ւորութեան կէտը ։ Ազգային վարչութեան Գլխոյն ու
Ժողովոց ընտրող և հսկող Երեսփոխանական Ժողով
մը պիտի հաստատուի ։ Այս Ժողովը Ազգին մէջէն
հ՛րգ մը մարդոց ձեռօք միայն պիտի ընտրուի, բայց
զԱզգը ամբողջ պիտի ներկայացունէ․ ուրեմն պէտք է
որ եթէ բոլոր ներկայացեալք ներկայացուցչին ընտրու-
թեանը պիտի չմասնակցին, գոնէ ամենուն ընտրու-
թեամբը օրինաւոր Թաղական խորհուրդներ կազմուին,
և անոնց տնօրէնութեամբը Երեսփոխանաց ընտրու-
թիւնը կատարուի, որպէս զի Ընդհանուր Ժողովն Ազ-
գին կողմէն ընտրուած և Ազգին օրինաւոր ներկայա-
ցուցիչն ըլլայ ։

Այս խորհրդածութիւններուն ի պատասխան՝

Յանձնաժողովի միւս անդամները կ՚ըսէին որ Կ. Պօլսոյ զանազան թաղերուն մէջ հին ու նոր պատճառներով զանազան կարծիք և կուսակցութիւնք կը տիրեն, որով Թաղական խորհրդոյ ընտրութիւնը խիստ դըժուար ըլլալէն զատ՝ տե՛ղ տե՛ղ ալ անհնարին պիտի ըլլայ, մանաւանդ Յանձնաժողովին ձեռօք: Եւ որովհետև Ազգին վիճակը և բաւական ժամանակէ 'ի վեր երեսի վրայ մնացած գործերը Պատրիարքական վարչութեան օր յառաջ կազմուիլը կը պահանջէին, պէտք է օրինաւորութեան նկատմունք մէկդի թողուլ, և գըտնուած մարդիկներով նախ Երեսփոխանաց ընտրութիւնն ընելու ջանալ, և ձգել, որ եթէ յաջողինք՝ նորընտիր Ընդհանուր Ժողովը Պատրիարք ու Ժողովներ ընտրելով Կեդրոնական վարչութիւնն հաստատելէն ետքը, հոգ տանի Թաղերուն, և աշխատի որ կանոնաւոր Խորհուրդներ հաստատուին ամենուն մէջ: Նաև կ՚ըսէին անանկ Թաղեր կան, որոնց արդէն Թաղականները փոխել չէ՛ տեղերնուն անգամ չ՚կրնար խախտել Յանձնաժողովը: Մենք երջանիկ պէտք է համարինք զմե՛զ եթէ կարենանք յաջողիլ այսպիսի մեղմ ընթացքով անգամ մեր պաշտօնը կատարել, այն պաշտօնը՝ որ 'ի բնէ Բարձրագոյն Դիւան Յանձնաժողովին կը պատկանէր քան թէ այլում. և եթէ կ՚ուզենք որ կէս ճամբէն ետ դառնալ չպարտաւորինք, պէտք է այժմէն կամ Բարձրագոյն Դիւան Յանձնաժողովի անդամակցութիւնը խնդրենք և անոր հետ մէկտեղ գործենք, և կամ գործի չ՚սկսած հրաժարինք:

Այս խնդրոյն վրայ Յանձնաժողովը բաւական վիճաբանելէն ետքը,

Նկատելով որ Ազգին Երեսփոխանութիւնը միանգամ պիտի ընտրուի ամբողջ, և Ազգին բաղդն ու վարչութեան ղեկը անոր ձեռքը պիտի յանձնուին. և եթէ անոր ընտրութիւնը օրինաւորութեան սահմանէն դուրս ըլլա-

րով ապահովութեամբ չկատարուի, ապագային ծագե-լիք դժուարութիւնները աւելի վնասակար պիտի ըլլան Ազգին քանթէ ուրիշ որեւէ պատճառներու հետեւանքը։

Նկատելով դարձեալ՝ որ եթէ Թաղական Խորհրդոց ընտրութիւնը երբ էնէ պիտի ըլլայ, և միշտ դժուա-րութեամբ պիտի կատարուի, աւելի աղէկ է զանի ա-ռաջ ընել քան թէ ետքը. վասն զի առաջ՝ Սահմանադ-րութեան Գործադիր Յանձնաժողով մը կայ, որ իր բոլոր ուշադրութիւն ու ճիգը ընտրութեանց վրայ թափե-լով կրնայ զանի յաջողցունել, ուր որ ասոր հակա-ռակ՝ եթէ ետքի մնայ, նորակազմ Վարչութեան պի-տի յանձնուի, և այն ալ ամեն տեսակ զբաղմունքէ պա-շարուած ատեն՝ ընտրութեանց մասին զանազան դըժ-ուարութիւններով պիտի տագնապի, և անցեալին նը-ման այս անգամ ալ Թաղերը տարիներով անկարգու-թեան մէջ ընկղմեալ՝ Վարչութեան կանոնաւոր շար-ժումը պիտի արգիլեն։

Նկատելով նաեւ՝ որ թէպէտ Յանձնաժողո-վին պաշտօնը մեծ է և ծանր, բայց այժմէն վհատելով հրաժարական տալը՝ Ընդհանուր Ժողովին վստահութեն 'ի դերև հանել է, և պարտազանցութիւն կը համարուի ընդհանուր Ազգին առջին։

Մեծագոյն մասի քուէով որոշեց որ "Յանձնաժո-ղովը Սահմանադրութեան օրինաւոր կերպով գործադ-րութեան համար ոչ աշխատութեան խնայէ և ոչ ժա-մանակի, և օրինաւոր Պատրիարքական վարչութիւն կազմելու համար նախ օրինաւոր Թաղական վարչու-թիւն հաստատէ. և Թաղերուն մէջ բռնացող կռիւ և անձանց տեղ Օրէնքը տիրապետել տալով, անմիջա-պէս Երեսփոխանական ընտրութեանց սկսի, մէկ կող-մէն ալ նորընտիր Թաղականաց ձեռօք ընդհանուր տուրքի Բէրհաշէ– ստակ հաւաքէ, և նորընտիր Վար-չութեան յանձնէ, որպէս զի Վարչութիւնն իր ընթաց-

քին սկիզբը դժուարութիւն չքաշէ անարգել յառաջ գնալու »։

Բայց որովհետեւ այս որոշման հակառակ կարծիք ունեցողները չհամոզուեցան, եւ հրաժարական իսկ տուին. եւ միանգամայն Թաղերուն մէջ տարաձայնութիւններ սկսելով, լրագրաց մէկ քանիին մէջ ալ արձագանք գտան, Յանձնաժողովը պատշաճ դատեց Համախորհուրդ ժողով կազմել Ապրիլ 14ին՝ ինչպէս որ վերը յիշեցինք. Բ. Դրան եւ Ազգային Յանձնաժողովներուն հետ, եւ անոնց ալ կարծիքը առնել այս խնդրոյն վրայ։

Բ. Դրան եւ Ազգային Յանձնաժողովներէն բարեհաճեցան գալ Երամեան Գէորգ պէյ, Տատեան Յովհաննէս պէյ, Սերվիչէն էֆէնտի, Մուպահեաճեան Յակոբ աղա, Եղիազարեան Յովհաննէս աղա, Մանիկեան Մանուկ աղա եւ Աշալթօն Մկրտիչ աղա. եւ Տեղապահ Սրբազանին նախագահութեամբ Յանձնաժողովին հետ ատեան կազմելով, լսեցին յուզուած խնդրոյն վրայ երկու տարբեր կարծիքներն ու Յանձնաժողովի մեծագոյն մասին որոշումը։

Մեծապատիւ Սերվիչէն էֆէնտին Բ. Դրան Յանձնաժողովին կողմէն ըսաւ՝ որ կարծեաց անհամաձայնութիւնը Թաղական եւ Երեսփոխանական ընտրութեանց մէկմէկէ առաջ կամ ետքը կատարուելուն վրայ ըլլալով, եթէ երկուքը միանոյն ժամանակ գործադրուելու ըլլան, տարաձայնութիւնը բ՛նականապէս կը վերնայ։ Բայց այս երկուքէն զատ երրորդ կէտ մը կայ որ կարեւորագոյն է, եւ ընտրական գործողութե̃ց յարակից. այն է Տուրքի խնդիրը, որ Յանձնաժողովին ուշադրութենէն պէտք չէ վրիպի, քանզի առանց անոր՝ Սահմանադրութե̃ հաստատութիւնը մեծամեծ դժուարութե̃ց կրնայ հանդիպիլ։ Ազգին այս պարտական եւ տարտամ վիճակին մէջ ո՞ր Վարչութիւն գործ կրնայ տեսնել առանց ստա-

կի, Թէև օրինաւորապէս հաստատուած ըլլայ։ Եթէ առարկուի որ նորընտրելի Քաղաքական ժողովին անմիջապէս Տուրքի խնդրոյն կրնայ զբաղիլ, և Ընդհանուր ժողովը անոր պատրաստ է զանի վաւերացունելու համար, կը պատասխանեմ՝ որ ազգային գործոց արդի վիճակին մէջ Տուրքի խնդիրն որոշել բաւական չէ սակի հաւաքումը ապահովելու համար. Նախ պէտք է ամեն Թաղ խաղաղի, Խորհուրդներն ու Ժողովներն հաստատուին, օրինաց հրամանատարութեան առջին ամեն ձայն լռել սովրի, այն ատեն կրնայ սակ մտնել Ազգին Կեդրոնական Սնտուկը։

Բայց սակայն հիմակուընէ սակ պէտք է որ Նորընտրելի Վարչութիւնը գործի չ՚սկսած՝ հրաժարիլ չի պարտաւորի. և որովհետև Թաղերուն մէջ կուսակցութիւնք կան, և Թաղական ու Երեսփոխանական ընտրութեանց՝ նա մանաւանդ Թաղականներուն պատճառաւ կրնայ դժուարութիւն ծագիլ, և կարգ մը մարդիկ Եթէ պաշտօնի չ՚հասնին՝ Տուրք տալը կը մերժեն. Յանձնաժողովը պարտի խոհեմութեամբ միանգամայն և ճարտարութեամբ վարուիլ, և յիշեալ ընտրութիւնները այնպիսի եղանակաւ մը տնօրինել որ ոչ վըրդովմունք պատահի, և ոչ անոնց պատճառաւ սակի նուազումն. և ասոր համար պէտք է Թաղական և Երեսփոխանական Քուէարկութիւնները միևնոյն ժամանակ, կամ մէկը միւսէն մէկ քանի օր ետքը միայն կատարել տալ, և միանգամայն Ընդհանուր Տուրքի բաշխումն ու հաւաքումն ընելով Քուէհամարի արդիւնքը չ՚հրատարակած, Ազգային Պատրիարքարանի գոնէ մէկ տարուան ծախուց բաւական գումար մը ձեռք բերել։

Այս Յատակագծին գործադրութեան համար պէտք է առաջ Մայրաքաղաքիս բոլոր Թաղերուն Քարոզիչները և Քահանայեաները հրաւիրել, և արդի Թաղական

գործակալաց մէջէն յարմարագոյն անձինքը զատելով, և անոնց վրայ առհասարակ մէկ մէկ հոգի վճռարար աւելցունելով, իւրաքանչիւր Թաղի Ընտրողական ժողովը կազմել ։

Ինկէ ետքը Յանձնաժողովը առաջին Տնօրէնութեամբ Ընտրողական ժողովներէն կը խնդրէ՝ իւրաքանչիւր Թաղի Թաղական խորհրդոյ ընտրութեան քուէ տալու իրաւունք ունեցող անձանց ցանկը, և նորընտրելի Թաղականաց եռապատիկ թուով ընտրելեաց ցուցակը պատրաստել ։

Երկրորդ Տնօրէնութեամբ Ընտրողական ժողովներուն կը պատուիրէ՝ իւրաքանչիւր ընտրողին կարողութեան չափը վեր 'ի վերոյ որոշել, և անուանը առջին նշանակել տարին որչափ տուրք տալու կարող ըլլալը ։

Այս կրկին ցուցակները՝ որոց առջինը Թաղական խորհրդոց, և միւսը Երեսփոխանաց ընտրութեանը պիտի ծառայեն, Յանձնաժողովին ներկայանալով, Յանձնաժողովը զանոնք կը քննէ, կը զտէ, և իւրաքանչիւր Թաղի Երեսփոխանական ընտրողները վճռաբար կը սահմանէ ։

Ու ետքը բոլոր Թաղերուն Երեսփոխանական ընտրողաց թուոյն վրայ Կ. Պօլսէն ընտրուելիք 80 Երեսփոխանաց բաշխումը կատարելով, ցուցակը կը հրատարակէ ։

Այս պատրաստական գործողութիւններն ընելէն ետքը, Յանձնաժողովը սրբագրեալ ցանկերը Ընտրողական ժողովներուն ղրկելով, երրորդ Տնօրէնութեամբ կը հրաւիրէ զանոնք նախ Թաղական խորհրդոց ընտրութեան համար Թաղական ընտրողաց ծանուցագիր ղրկել և քուէնին խնդրել, այս ինչ օր այս ինչ տեղը բերել կամ ղրկելու պայմանաւ. երկրորդ՝ մէկ քանի օր ետքը Երեսփոխանաց ընտրութեան համար Երեսփոխանական ընտրողաց ծանուցագիր ղրկել և քուէնին խնդրել, այնինչ

որ այն ինչ տեղը բերել կամ ղրկելու պայմանաւ։ Այս վերջին ծանուցագրերուն մէջ Յանձնաժողովը իւրաքանչիւր ընտրողի համար սահմանուած տարեկան Ընդհանուր տուրքը նշանակելով, կը հրաւիրէ ութ օր պայմանաժամու մէջ՝ Երեսփոխանական քուէն ղրկելու միջոցին՝ նաև տուրքը յանձնել Գանձապետի մը զոր Յանձնաժողովը կամ Ազգային Վարչութիւնը կը կարգէ Թաղին մէջ։

Եթէ ընտրող մը քուէ և տուրք միանգամայն ղրկէ, երկուքն ալ կ՚ընդունուին, թէև ղրկած տուրքը խնդրուածէն աւել կամ պակաս ըլլայ։ Եթէ առանց տուրք ղրկելու միայն քուէ ղրկէ, քուէն կ՚ընդունուի իբրև մուրհակ։

Եթէ տուրքի պատճառաւ ընտրողաց մեծագոյն մասը քուէարկութենէ հեռի կենան, որոշեալ պայմանաժամու մէջ եկած քուէները բաւական կը սեպուին և անոնց արդիւնքը օրինաւոր կը ճանչցուի, թէև 400 ընտրող ունեցող Թաղի մը մէջէն միայն 20 հոգի քուէ տուած ըլլան։

Քուէարկութիւնները կատարուելէն ետքը՝ Յանձնաժողովը չորրորդ Տնօրէնութեամբ հրահանգ կ՚ուտայ Ընտրողական ժողովներուն՝ Քուէհամար ընել նախ Թաղական խորհրդոց ընտրութեան համար եկած քուէներուն, և ետքը՝ Երեսփոխանաց համար ղրկուած քուէներուն, և երկուքին արդիւնքը գաղանի պահելով, Յանձնաժողովին ներկայացունել։

Վերջապէս Յանձնաժողովը Քուէհամարի արդեանց վրայ պէտք եղած քննութիւնը, և օրինաւորութեան պահանջած սրբագրութիւնը ընելէն ետքը, մի և նոյն ժամանակի մէջ կը հրատարակէ Թաղական խորհրդոց անդամներն և Ազգային Երեսփոխանները։

Կը մնայ այն ժամանակ Երեսփոխանները հրաւիրել և Ընդհանուր ժողով կազմել, և Գանձապետներուն

քով հաւաքուած ատակը առնել և նորընտիր Վարչութեան յանձնել։

Բարձրագոյն Դրան և Ազգային Յանձնաժողովներուն միւս անդամները ձայնակից եղան Սերվիչէն Էֆէնտիին, և անոր առաջարկած Յատակագծին գործադրութեանը համար յորդոր մատուցին Գործադիր Յանձնաժողովին։

Յանձնաժողովը նկատելով որ այսպիսի Յատակագիծ մը կրնայ՝ թէ որ ճարտար ձեռքով և խղճի մտօք գործադրուելու ըլլայ, Սահմանադրութեան ժամ յառաջ հաստատութեանը օգնել, յանձնառու եղաւ անոր գործադրութեանը ձեռնամուխ ըլլալ սա պայմանաւ՝ որ եթէ կազմուելիք Ընտրողական ժողովները անփոյթ և անխնամ ընթացքով անոր գործադրութիւնը չփութեն և վտանգի մէջ դնեն, ինչպէս որ կը կասկածէր, Յանձնաժողովն ալ ընդհատէ ընթացքը, և դարձեալ իր առաջին որոշմանը գայ։ Միայն ընդհանուր Տուրքի բաշխման և հաւաքման խնդրոյն համար բացարձակապէս յայտնեց որ Սահմանադրութեան 92դ յօդուածին ուղղակի հակառակ ըլլալով, երբեք չկրնար յանձնառու ըլլալ Յատակագծին համեմատ անոր գործադրութեանը։ Սակայն Ազգին նորընտրելի Վարչութեան դրամական ծառայութիւն մը ընելու, և այս կերպով ալ Սահմանադրութեան հաստատութիւնը ապահովելու դիտմամբ՝ Երեսփոխանական ընտրողներէն 75 ղուրուշի նպաստ մը իբր թերհաշիւ իրենց այս տարուան Ընդհանուր տրոց խնդրելու և հաւաքելու կամք ունենալը հաստատեց, և այս փոքրիկ չափաւորութեամբ առաջարկեալ Յատակագծին անմիջապէս գործադրութեանն սկսելու որոշում ըրաւ։

Արդարև՝ հինգ օր ետքը Ապրիլ 19 Նախագահ Սրբազանի կողմէն Պալաթիոյ խորհրդարանը հրաւիրուեցան Կ. Պոլսոյ բոլոր եկեղեցեաց Թաղից Վարդապետները, և Թաղից չգտնուած տեղերուն Աւագերէցները, միանգամայն Թաղական գործակալութիւն ընող խորհուրդներէն երկական անձինք։

Յանձնաժողովն ասոնց հետ խորհրդակցութեամբ՝ իւրաքանչիւր Թաղի 1° Սահմանները որոշեց. 2° Ընտրողական ժողովները կազմեց, գտնուած պաշտօնատէրներուն վրայ Թաղին պատուաւոր բնակիչներէն երեքէն մինչև վեց անձինք աւելցունելով. 3° Նորընտրելի Թաղական խորհրդոց քանի՞ անդամէ բաղկանալքը սահմանեց, և 4° Իւրաքանչիւր Ընտրողական ժողովոյ նոյն շաբթու մէջ տեսնելու գործերուն վրայ հրահանգ տուաւ, որ Առաջին Տնօրէնութիւն անունով ամեն Թաղի համար միօրինակ տպագրուած և պատրաստ էր։

Այս Տնօրէնութեամբ Ընտրողական ժողովներուն կը պատուիրուէր Ա. իրենց Դիւանը կազմել, և ընտրողական գործողութեանց համար Քննիչներ որոշել։

Բ. Թաղին մէջէն Թաղական խորհրդոց ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցող անձանց ցանկը շինել Սահմանադրութեան 55դ յօդուածին համեմատ։

Գ. Նորընտրելի Թաղական խորհրդականաց եռապատիկ թուով ընտրելեաց ցուցակ շինել, և ամենը մէկէն հետևեալ շաբթուն Գործադիր Յանձնաժողովին ներկայացունել։

Անմիջապէս Մայր Եկեղեցի, Խասգեղ, Կէօլքբաշա, Թօփքափու և Բալաքէօմրիւք թողք բարձին, և գործադրութեան առաջին քայլին՝ կայնեցան։

Ասկէ երեքը կ՚ըսէին որ « մինչև Սահմանադրութիւնը տպագրեալ ձեռքերնիս չհասնի, վստահութեամբ

չէնք կրնար գործի սկսիլ», և այնպէս ալ ըրին:

Թօփգաբուի ազգային պաշտօնակալք «Թաղական ուրիշ գործերու զբաղեալ ըլլալով, Սահմանադրութեան գործադրութեանը ժամանակ չ'ունենալնին կը յայտնէին»:

Իսկ Քարակէօմրիւք դժգոհ էր իր սահմաններէն, և «մինչև որ իր պահանջմանց գլուխ չըլլայ, որևիցէ միօրինութիւն չընդունելիքը յայտնապէս կիմացունէր»:

Քարակէօմրիւք շատ ժամանակէ 'ի վեր Պալատու հետ Թաղական սահմանի վէճ ունէր: Պալատ և Քարակէօմրիւք իրարմէ բաւական հեռու, և մանաւոր Եկեղեցեօք առանձին Թաղ ըլլալնին յայտնի է. բայց Սալմաթօմրուխ՝ որ երկուքէն ալ գրեթէ միևնոյն հեռաւորութեամբ [illegible], և բազմամարդ ըլլալով, և իր մէջ Եկեղեցի չ'ունենալով, բնականաբար իր դրացիններուն տենչանաց առիթ կ'ընծայէ, քար գայթակղութեան եղած էր երկուքին մէջ: Երկուքն ալ զանի կ'ուզէին իրենց սեպհականել, և երկուքն ալ բազում աշխատութեամբ կերպով մը իրենց նպատակին հասեր էին: Քարակէօմրիւք Տէրութեան Թահրիրէ ժամանակը՝ Սալմաթօմրուխցիներն իրեն հետ մէկ տումարի մէջ արձանագրել տուեր, և Մուխթարն ու Քէհեան իր կողմէն գրեր էր: Իսկ Պալատ՝ Ազգային Պատրիարքարանէն կոնդակ ընդուներ էր, և Սալմաթօմրուխն Ազգային իրաւամբ իրեն սեպհականութիւնը կը ճանչնար:

Այս պարագայից մէջ երբ Յանձնաժողովը Թաղերուն սահմաններն որոշելու ատեն Քարակէօմրիւքի և Պալատի Թաղականաց հանդիպեցաւ, մէկէն 'ի մէկ Սալմաթօմրուխի խնդիրն արծարծելով, երկուքին ալ պահանջմանց և սահմաններուն՝ անսահման ըլլալը հասկցաւ, և երկու կողման առարկութիւններն ու իրաւունքը քննելէն ետքը՝ առաջարկեց որ կամ Պալատ և Քարակէօմրիւք միանան, և Սալմաթօմրուխն երկուքին



6509.57

մէկէն ըլլայ, և կամ Սալմաթօմրուխ Թաղը երկու մաս բաժնուելով, երկուքն ալ մասնակից ըլլան անոր ժառանգութեանը։ Միութեան խնդրոյն՝ Գալաթցիք հաճեցան, բայց Քարակէօմրիւք զանի մերժեցին։ Մնաց բաժանումը։ Սալմաթօմրուխ՝ իր աշխարհագրական դիրքով Նէ—Եոլան բաժանումն անհնար կ'ընէր. Յանձնաժողովը ուրիշ եղանակ մը գտաւ՝ որ Եօրղալէս երկուքն ալ բաժնէր նոյն Թաղը, և կրնար դրացիններուն երկուքն ալ գոհ ընել, եթէ գոհ ըլլալ գիտնային։

Յանձնաժողովը առաջարկեց որ « Սալմաթօմրուխ բնակիչներէն անոնք որ Գալաթու Քահանայից ծուխ են, Գալաթու Թաղականաց ընտրող ըլլան, և Քարակէօմրիւքի Քահանայից ծուխ եղողները Քարակէօմրիւքի Թաղականին ընտրութեան մասնակից ըլլան, Թաղը ամբողջ մնալով դարձեալ ինչպէս որ է, երկուքին մէջ տեղ ազատ 'ի միութենէ, և ժողովուրդն ազատ ձըգուի իր կրօնական պարտաւորութիւնները կատարել ուր Եկեղեցին որ ուզէ, և իր զաւակները դաստիարակելու ղրկել ուր Թաղի Դպրոցն որ հաճի »։ Գալաթցիք հաճեցան այս տնօրէնութեան, բայց Քարակէօմրիւքցիք այս ալ մերժեցին։ Եւ թէպէտ ուրիշ Թաղերու նման իրենք ալ հրահանգ առին և գնացին, բայց ինչպէս մերը լսինք, բողոք ըրին և անոր գործադրութիւնը ետ ձգեցին։

Յանձնաժողովին առաջին Տնօրէնութիւնը մէկ քանի մանր Թաղերու մէջ ալ ժամանակ մը անգործադրելի մնաց. բայց պատճառը բողոք չէր, այլ անոնց մէջ Ընտրողական ժողով կազմելու և գործ տեսնելու կարողութիւն և եռանդ չ'գտնուիլն էր.

Յանձնաժողովը ցաւօք սրտի հասկցաւ որ այսպիսի պարագայից մէջ Համախորհուրդ ժողովով ընդունուած Յատակագիծը խիստ քիչ բաղդ ունէր յաջողելու, բայց Թաղերուն կէսէն աւելին առաջին Տնօրէնութեան

միամտաբար գործադրութեան փոյթ ունենալը տեսնելով, առաջարկեց քայլ մըն ալ առնել, և պինդ կալ ու յարատեւել, թերեւս բաղդքող Թաղերը ուրիշներէն օրինակ առնելով կ'աճապարեն փոխել ընթացքնին և ամենուն հետ մէկ տեղ Սահմանադրութեան հաստատութեանը գործակից կ'ըլլան։

Այս յուսով Յանձնաժողովը երկրորդ Տնօրէնութիւն մ'ալ պատրաստեց, ու առաջինին արդիւնքը իրեն ներկայացնող ժողովներուն տուաւ։

Այս Տնօրէնութեամբ Յանձնաժողովը կը պատուիրէր՝ Թաղին մէջ Երեսփոխանական ընտրողութեան իրաւունք ունեցողները Սահմանադրութեան 65, 66, 67[դ] յօդուածներուն համեմատ որոշել, ու անոնց ցանկը ութ օրուան մէջ ներկայացունել։

Առաջին Տնօրէնութեան գործադրութիւնը կատարող Թաղերը ուշ կանուխ այս ալ գործադրութիւնն ըրին։

Երեսփոխանական ընտրողաց ցանկերը սկսան մէկ կողմէն հասնիլ Յանձնաժողովին ձեռքը։ Բայց Յանձնաժողովին վստահութիւնը քանի կ'երթար՝ կը նուազէր. վասն զի ցանկերուն մէկ փոքր մասը հազիւ գոհացուցիչ կերպով պատրաստուած էր. մնացածները՝ կամ չափէ դուրս ընտրող կը պարունակէին, կամ Թաղին վայլածէն ալ քիչ, և ընդհանրապէս ամենն ալ սրբագրութեան կարօտ էին։ Յայտնի էր որ Ընտրողական ժողովները հիմնական փոփոխութեան պէտք ունէին. բայց Յանձնաժողովը խոհեմութիւն դատեց իր ընթացքը տակաւին չփոխել, և քայլափոխ մըն ալ ընելով երրորդ Տնօրէնութիւն պատրաստեց, ու երկրորդը կատարողներուն ղրկեց։

Այս անգամ Յանձնաժողովը ուղղակի իբր Երեսփոխանական ընտրող զատուած անձանց գրեց։ Ամեն Թաղի մէջ Ազգային ընդհանուր տրոց Առժամանակեայ

գանձապետներ կարգեց, և բոլոր ընտրողներուն Պատրիարքական Տեղապահի կողմէն մէկ մէկ տոմսակ ղրկեց, ութ օր պայմանաժամով այս տարուան Օգոստոսին ընդհանուր տրոց Թերհաշիւ 75 ղուրուշի նպաստ մը խնդրելու համար։ Այս տոմսակները ժապաւինեալ անդորրագիրներու հետ մէկտեղ տպուած՝ ղրկուեցան Ընտրողական ժողովներուն, և երրորդ Տնօրէնութեամբ պատուէր տրուեցաւ որ զանոնք ընտրողաց ղրկելէն ետքը, ընտրողաց ցանկն ու անդորրագիրները յանձնեն Գանձապետին, և ընտրողաց ամէն կերպով յորդոր ընեն որոշեալ պայմանաժամու մէջ հատուցանել խնդրուած նպաստը։

Եւ որպէս զի ընտրողաց վստահութիւն տրուի, Յանձնաժողովը անոնց ուղղած տոմսակներուն մէջ մասնաւոր ազդարարութիւն ըրաւ որ "այս անգամ հաւաքուելու ստակը Վսեմաշուք Երամեան Գէորգ պէյին քով իբրև աւանդ պահուելով, նորընտիր Երեսփոխանական Վարչութեան պիտի յանձնուի"։

Աստ յայտնուեցաւ ընդհանրապէս Թաղական գործակալաց և Ընտրողական ժողովոց տկարութիւնը։ Բընաւ մէկ Թաղ չգտնուեցաւ, ուր որոշեալ ընտրողները որոշեալ պայմանաժամու մէջ իրենց Տուրքի Թերհաշիւը վճարէին. մեծ մեծ Թաղերու մէջ ընտրողաց մէկ տասներորդ մասէն հազիւ ստակ կը հաւաքուէր. Թաղ ալ կար ուր՝ Ընտրողական ժողովը բնաւ իսկ տոմսակները չէր ցրուեր ընտրողաց, և այս ալ ամենէն մեծ և ամենէն շատ ընտրող ցոյց տուող Թաղերէն էր, պատճառելով որ Սահմանադրութեան 91է յօդուածին համեմատ ընդհանուր Տուրք հաւաքելու համար Պատրիարքարանի ունեցած իրաւասութիւնը ինքը չ'ուզեր յափշտակել։

Յանձնաժողովը մէկ քանի անգամ Ընտրողական ժողովներուն յորդոր և խրախոյս մատուցանելէն ետ-

քը, տեսնելով և մտածելով որ եթէ Յատակագծին գործադրութեան մնացած կէտերը՝ որ աւելի դժուարին էին և շատ աւելի ճշդութիւն կը պահանջէին, դարձեալ տանց յանձնուելու ըլլայ, Սահմանադրութեան հաստատութիւնը բոլորովին վտանգի մէջ պիտի մնայ, որոշեց իր ընթացքը փոխել, և իր առաջին դրութեանը դիմել, թէ որ Սահմանադրութեան հրատարակութենէն ետքն ալ գործին վիճակը զգալի կերպով չ'փոխուի:

Ելաւ Սահմանադրութիւնը, և անմիջապէս և ամենէն առաջ Ընտրողական ժողովոց ղրկուեցաւ:

Ես մնացող թաղերը անձապարեցին՝ առաջին, երկրորդ և երրորդ Տնօրէնութիւնները մէկէն խնդրել, և մէկտեղ գործադրելու եռանդ ցոյց տալ:*

Վարկեան մը Սահմանադրութեան գործադրութիւնը կենդանութիւն առաւ: Յանձնաժողովին սկսաւ խրախոյս տալ ամենուն, որպէս զի բոլոր թաղերը մէկ տեղ և իրարու նախանձով գործն առաջ տանին, բայց 'ի զուր. ուշ սկսող թաղերն ալ առաջին և երկրորդ Տնօրէնութեանց պատասխանելէն ետքը, երրորդին հասնելով միւսներուն պէս կաղալ սկսան:

Գործը կ'երկարէր, ժամանակը կը կորսուէր, ազգայնոց անհամբեր բաղձանքը ժամ մը առաջ Սահմանադրութեան հաստատութիւնը կը պահանջէր. Յանձնաժողովին այլ ևս չէր ներեր միևնոյն Յատակագծին վրայ յարատևել: Ուստի առաջադրեց նախ գործին վիճակը հրապարակաւ ստուգել, և ետքը նոր ընթացք մը վճռաբար որոշել, և գործադրութեանը ձեռնարկել:

* Միայն Քարակէօփրիւկ ծանր կը շարժէր. բայց վերջէն ան ալ յանձն առաւ գործի ձեռնարկել, թէպէտև միշտ իր Սալմաթոմրուխի տուրը Գալատի բաժին չհանելով ամբողջ վայելելու դրութեամբ, ինչպէս իր պատրաստած ցանկերէն տեսնուեցաւ, որոնց մէջ Սալմաթոմրուխի բընակիչներէն 250 Թաղական ընտրողք և 60 Երեսփոխանական ընտրողք գտուած են. միևնոյն անձինք միանգամայն Գալատի ցանկերուն մէջն ալ նշանակուած ըլլալով:

Յունիս 7ին Տեղապահ Սրբազնի Նախագահութբ համախորհուրդ ժողովի հրաւիրուեցան Ազ. ժամանակեայ վարչութե Խառն ժողովը, և բոլոր Թաղերու Ընտրողական ժողովոց Ատենապետները, և մէկմէկ անդամ: Թաղերէն հրաւիրեալներն ամբողջ եկան. իսկ Խառն ժողովէն միայն մէկ քանի անձինք բարեհաճեր էին գալ:

Յանձնաժողովը Սահմանադրութեան գործադրութիւնն ի՞նչ կէտի և ի՞նչ վիճակի հասած ըլլալը ժողովին նկարագրեց. ուրաքանչիւր Թաղի պատգամաւորաց՝ նոյն Թաղի Երեսփոխանական ընտրողներէն հաւաքուած ստակին քանակութիւնը, և պակաս մնացածին ուշանալուն պատճառ առանձին առանձին հարցուց. և ամենէն առած պատասխաններն ամփոփելով տեղեկացաւ որ Մայրաքաղաքիս Թաղերէն իբր Երեսփոխանական ընտրող որոշուած անձանց հազիւ մէկ ութերորդ մասը 75 ղուրուշի նպաստը հատուցած է. Մնացածներուն մէջ կան որ ունին կարողութիւն և պիտի տան, եթէ մէկ քանի անգամ ալ ուզուի. և կամ պիտի չ'տան, վասն զի տեսակ տեսակ պատճառներով դժկամակած են Ազգին, և կամ քանի՛ որ Սահմանադրութիւնն հաստատուած չէ, վստահութիւն չ'ունին և ոչ մէկուն. անանկներ ալ կան որ կ'ուզեն տալ և պիտի տա՛ն անշուշտ, բայց կանխիկ չ'են կրնար, պայմանաժամու կը կարօտին. վերջապէս բնաւին կարողութիւն չունեցողներ, ալ կան, որ ուզե՛ն ալ նէ պիտի չ'կրնան տալ:

Թաղական պատգամաւորները յայտնեցին նաև որ Ընտրողական ժողովները և մանաւորապէս Թաղական գործակալները՝ ստակի հաւաքման համար մեծ ջանք և աշխատութիւն ըներէն ետքը համոզուեր են որ պիտի չ'կրնան կատարելապէս յաջողիլ, և յօժարամիտ պատրաստ են հրաժարելու եթէ իրենց տեղ ուրիշներ դըրուին: Մէկ քանի Թաղերէ, մանաւորապէս Սամաթի-

այէն և Եէնիքաբուէն գրով խնդիր ևս մատուցին հրաժարիլ, և տեղի տալ օրինաւոր Թաղական խորհուրդի ընտրութեան ։

Յանձնաժողովը դիտողութիւն ըրաւ որ ազգային Սահմանադրական ընտրութեանց օրինաւորութիւնը ապահովելու համար, այժմէն ընտրողաց ճշմարտապէս ընտրութեան իրաւունք ունենալը երաշխաւորելու են Ընտրողական ժողովները կամ Նիւթապէս, ամեն մէկէն 75 ղուրուշի նպաստը ընդունելով, և կամ Բարոյապէս իւրաքանչիւր ընտրողի տարին գոնէ 75 ղուրուշ վճարելուն վստահութիւն տալով Յանձնաժողովին ։ Եթէ Ընտրողականք այս երաշխաւորութիւնը չեն կրնար տալ, Յանձնաժողովը կը պարտաւորի գործին ընթացքը փոխել, և ընտրութեանց հիմունքը ապօրինաւորութենէ զերծ պահել ։

Ժողովականք միաձայն խոստովանեցան որ արդի Թաղական գործակալները քիչ ժամանակի մէջ փոխուելու դատապարտեալ ըլլալով, օրինաւոր Թաղական խորհրդոյ զօրութիւնը և վստահութիւնը չունին և չեն կրնար ունենալ. և անոնցմէ մինչև հիմա տեսնուածէն ետեւ արդիւնք ակնկալել և երաշխաւորութիւն խնդրել՝ անօգուտ է, վասն զի չեն կրնար տալ ։ Ուստի համաձայնութեամբ առաջարկեցին Յանձնաժողովին՝ սակի խնդիրը առ ժամն մէկդի թողուլ, և օրինաւոր Թաղական խորհուրդներ ընտրելու անօրէնութի ընել, որպէս զի նորընտիր Թաղականաց միջոցաւ Սահմանադրական ընտրութեանց պէտք եղածը հոգացուի ։

Յանձնաժողովն ընդունեց այս առաջարկութիւնը որ իր նախկին որոշման կատարելապէս կը համաձայնէր, և անմիջապէս Թաղական ընտրութեանց եղանակը և գլխաւոր պարագաները որոշելով, գործադրութիւնը յանձնեց իր մէջէն Մասնաժողովի մը, որպէս զի դիւրութեամբ անօրինուի ։

Թաղական խորհրդոց ընտրութեան սկսելու միջոցին Երևան ելաւ Սէօ–Բէա՛ն խնդիրը։

Գործադիր Յանձնաժողովը Թաղական խորհրդոց Սահմանադրական տրամադրութեանց քաջ խելամուտ ըլլալով, պարտ անձին ճանչցաւ Թաղերուն իրարմէ անկախութիւնը յարգել, և ամենևին Թաղ մը մէկ ուրիշի հետ միացունելու իր կողմէն փոյթ չցուցընել։

Բայց Թաղեր կային որ իրարու մօտ ըլլալով, և կամ մէկը տկար և միւսը զօրաւոր, կամ երկուքն ալ տկար գտնուելով, կուզէին միանալ, և միութեամբ զարգանալ. Յանձնաժողովն ասոնց արգելք չէր կրնար ըլլալ։

Յանձնաժողովը միայն Գալատի և Բարակէօմրիւքի Թաղերուն առաջարկութիւն ըրած էր միանալ, այն ալ Սալմաթօմրուխի խնդիրը միութեան մէջ ընկղմելու դիտմամբ։

1° Գալաթիա և Գասըմբաշա Յանձնաժողովին հանրագրով խնդիր ըրին որ Բերայի հետ միանան. Յանձնաժողովն ընդունեց երկուքին ալ խնդիրը, և Բերայի Թաղական ընտրութեան հրահանգին մէջ Ընդհանուր ժողովին այս որոշումը հաղորդեց, միանգամայն տնօրինելով որ Բերայի նորընտրելի Թաղական խորհուրդը՝ Բերայի Ս. Երրորդութիւն և Ս. Յարութիւն Եկեղեցեաց, Ֆէրիգէօյի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ, Գասըմբաշայի Ս. Յակոբ Եկեղեցւոյ և Գալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ յատուկ հոգաբարձութիւններ հաստատէ, իւրաքանչիւրին մօտերը բնակող բանիքուն ազգայիններէ, և իւրաքանչիւր Եկեղեցւոյ և անոնց հովանաւորութեան ներքև գտնուող Դպրոցաց ելևմուտը առանձինն հաշուէ և առանձինն տնտեսէ։ Բերայի Ընդհանուր ժողովն ընդունեց այս տնօրէնութիւնը, այն պայմանաւ որ “ եթէ նորընտրելի

խորհուրդը չկրնայ յանձն առնուլ Պապին բաշխել և Գալաթիոյ Թաղերուն հոգատարութիւնը, արտօնութիւն ունենալով Նորհաստատելի Պատրիարքական վարչութեան դիմել և նոր անօրէնութիւն խնդրել։ Յանձնաժողովը խոստացաւ այս պարագայս արձանագրել իր ատենագրութեան մէջ։ Բայց քիչ մը ետքը՝ Գալաթիոյ ժողովուրդը գրեթէ ամբողջ ներկայացաւ Յանձնաժողովին, և խնդրեց վերստին իր անկախութիւնը ստանալ. Թաղական խորհուրդի ընտրութեան ժամանակ՝ առհարկին նաև Բերայի բնակիչներէն խորհրդական ընտրելու պայմանաւ։ Յանձնաժողովն այս խնդիրն ալ յարգեց, և գրեց Բերա՝ որ Գալաթիոյ ծանութենէն ազատած է նորընտրելի խորհուրդը։

2° Սթէնեա և Եէնիգեղ իրարմէ անկախ և առանձին խորհուրդ ունենալու կամք ունէին, բայց ետքէն միանալու որոշում ընելով, Յանձնաժողովէն խնդրեցին երկուքին մէկ Թաղական խորհուրդ անօրինել։ Յանձնաժողովը կատարեց խնդիրնին։

3° Պալատ և Բարակէօմիւք Յանձնաժողովին առաջարկած միութիւնը մերժելէն ետքը՝ առանձին Թաղ ճանչցուեցան, և Սալմաթօմրուխ Ճորլուլեան Ճաժամամէջը երկուքին ալ սահմաններ որոշուեցան։ Ինչպէս արդէն յայտնեցինք, Պալատ հաճութեամբ ընդունեց այս անօրէնութիւնը, և իրեն որոշուած սահմաններուն մէջ Թաղական ընտրութիւնը կատարելով, իր օրինաւոր խորհուրդը հաստատեց։ Այս ընտրութեան մէջ Յանձնաժողովը ուշադրութեան արժանի սա կէտը նշմարեց որ Սալմաթօմրուխի բնակիչներէն Պալատի Թաղէցի որոշուած 200էն աւել ընտրողաց մէջէն միայն 70 անձինք մասնակից եղան անոր քուէարկութեանը։ Բայց ասոր պատճառը՝ բոլոր այս ընտրողներուն Պալատի Թաղէցի ճանչցուելը չուզելը չէր, այլ նոյն օրը՝ Բարակէօմիւքի Թաղական գոր-

ծախալաց ճարտարմտութեամբը՝ Քարակէօմրիւքի Եկեղեցւոյն մէջ պարգեւաբաշխութեան հանդէս կատարուելով, երկու օր առաջ աշակերտաց սպառնալիք ալ եղած էր որ «եթէ ծնողքնին Գալատի քուէ տան, իրենք ալ պիտի վռնտուին Դըպրոցէն»։ Եւ որովհետեւ Սալմաթօմրուխի բնակիչք ըստ մեծի մասին աղքատ են, եւ Սալմաթօմրուխի ու Քարակէօմրիւքի Դպրոցներն ձրի, բայց Գալատինը աշակերտներէն քիչ շատ նպաստ կը խնդրէ, ծնողք աւելի շահաւէտ համարեր են ինքզինքնին Գալատի քուէէն զրկել, քան թէ իրենց զաւակը դաստիարակութենէ։

Այս է ասոր նման հնարքներով Գալատի Թաղական ընտրութիւնը խանգարելու փորձեր փորձելէն ետքը՝ Քարակէօմրիւքի Թաղական գործակալք երբ տեսան որ Գալատ յաջողեցաւ, եւ խորհուրդը կազմեց, եւ ոչ միայն Գալատ, այլ Մայրաքաղաքիս բոլոր թաղերը, մինչեւ անգամ ամենէն յապաղեալները իրենց խորհուրդը ընտրեցին, եւ միայն Քարակէօմրիւք մնաց հին վիճակի մէջ, բազմութեամբ Յանձնաժողովին դիմեցին, եւ միշտ իրենց հնօրեայ պահանջմանը վրայ պնդկենալով, Սալմաթօմրուխի թաղը ամբողջ իրենց սեպհականելու պայմանաւ Թաղական ընտրութիւն ընելու անօրէնութիւն խնդրեցին։ Միայն Գալատի Քուէարկութեան մասնակից եղող 70 Սալմաթօմրուխցիներուն համար չնորհ ընել կը զիջանէին, եւ կ'ընդունէին որ անոնք Գալատի հետ մնան, եւ անոր Թաղականին ընտրութեան քուէ տուած ըլլալով, Սահմանադրութեան հակառակ իրենց ընտրութեանն ալ քուէ չ'տան։ Բայց Յանձնաժողովը այս կարծիքէն չ'էր. երկու Թաղերուն համար իր որոշած սահմանները կ'ուզէր որ անփոփոխ մնան. ուստի Քարակէօմրիւքցւոց առաջարկեց կամ նոյն սահմաններուն մէջ իրենց ընտրութիւնը

ամփոփել․ կամ առանց Թաղականի ընտրութեան սպասել մինչև Պատրիարքական փոփոխութեան հաստատութիւնը ։

Սակայն Բարակէօմիւրցիք հանդարտ չ'էին կենար․ Սամաթօմբուխի մէջ շփոթ, բողոք պակաս չէր․ յաճախ յաճախ Յանձնաժողովին յարձակում կ'ըլլար․ Բարակէօմիւրցիք միշտ իրենց խնդիրը կը կրկնէին առանց զիջում ընելու, և վերջերը սկսան նաև խնդիրնին սպառնալեօք զօրացուցանել ։ Ի վերջոյ Յանձնաժողովը ձանձրացաւ․ և վճռական անօրէնութեամբ Սամաթօմբուխի խնդիրը բառնալու նկատամամբ որոշում ըրաւ որ “Սամաթօմբուխի բնակիչներէն անոնք որ Գալաթի Թաղականաց ընտրութեան մասնակից եղեր են, Գալաթի Թաղեցի ձանչցուին և անոր հետ միացեալ միան․ իսկ մնացածներուն առանձին առանձին հարցում ըլլայ թէ ո՛ր Թաղը կ'ուզեն․ որոնք որ Գալաթի յարիլ կ'ուզեն, առջիններուն պէս Գալաթի միացեալ ձանչցուին․ իսկ Բարակէօմիւր ուզողները անոր հետ միանան, և բնիկ Բարակէօմիւրի և երկու Սալմա կոչուած Թաղերուն հետ մէկ տեղ Թաղական խորհուրդ ընտրեն Բարակէօմիւրի ”։ Յանձնաժողովն այս որոշման գործադրութիւնը յանձնեց իր մէջէն Սանաժողով մը որ յուլիս 21 կիրակի օր Սամաթօմբուխի դպրոցն երթալով, 'ի ներկայութեան Գալաթի և Բարակէօմիւրի Թաղականներէն մէկ քանիին առանձին առանձին հարցումն ընել սկսաւ Սամաթօմբուխի այն 250 ընտրողաց՝ որ Գալաթու և Բարակէօմիւրի ցանկերուն մէջ միանգամայն նշանակուելու պատիւն ունեցած էին ։ Նոյն օրը Սանաժողովին ներկայացան 30 ի չափ անձինք, և ամէն մէկն ուզած Թաղին տումարին մէջ արձանագրուեցան ։

Նոյն օրը երևան ելաւ նաև զարմանալի պարագայ մը որ քիչ մը ետքը մեծ ազդեցութիւն ունե-

ցաւ Սալմաթօմրուխի թաղականներուն խնդրոյն վրայ : Ինչի Գարակէօմրիւքի թաղեցիներէն բազմաթիւ ստորագրութեամբ Հանրագիր մը եկաւ Ատենաժողովին, որով յիշեալ թաղեցիք կը բողոքէին Սալմաթօմրուխցւոց ընթացքին դէմ, և կ'ըսէին թէ "այս ամէն շփոթութեանց պատճառը դաս մը մարդիկ են որ Սալմաթօմրուխի մէջ, և կամ բոլորովին հեռու թաղեր կը բնակին, բայց 'ի վաղուց անտի Գարակէօմրիւքի թաղին վրայ բռնացած, անոր Եկեղեցւոյն Եկեղեցպանութիւն կ'ընեն՝ առանց երբէք հաշիւ տալու, և Դպրոցին խնամք կը ցուցնեն, առանց յառաջադիմութեանը ճշմարտապէս հոգ տանելու. ուստի իրենք՝ բնիկ Գարակէօմրիւքցիք՝ կը մերժեն զանոնք, և առանց օտարի միջամտութեան՝ իրենց թաղին իրաւասութիւնը իրենց պահելով՝ կ'ուզեն առանձին խորհուրդ կազմել, զատ ձգելով Սալմաթօմրուխ՝ որ երթայ միանայ որու հետ որ կամի" :

Ատենաժողովը նոյն օրը կարեւորութիւն չտուաւ այս դէպքին. և հետեւեալ նիստին դարձեալ իր պաշտօնին շարունակութեան համար Սալմաթօմրուխ ղրկեց իր անդամներէն մէկը : Բայց ընտրողաց հարցափորձի ժամանակ՝ Սալմաթօմրուխի բնակիչներէն կարգ մը մարդիկ անոր մօտ գալով "մո—նի՛—ն կը պոռան. մենք կ'ըսեն Պալատ, Սալմաթօմրուխ և Գարակէօմրիւք զատ թաղ չ'ենք ճանչնար. ամենուս միշտ մէկ էինք, դարձեալ մէկ մնալ կ'ուզենք" : Այս միութեանձայնը երթալով սաստկացաւ Սալմաթօմրուխի մէջ, և բնիկ Գարակէօմրիւքցւոց բաժանման խնդրոյն հետ Սալմաթօմրուխցւոց միութեան խնդիրն ալ աճեցաւ :

Վերջապէս Յուլիս 26 ին Յանձնաժողովը մէկ ուրիշ խնդրոյ համար Պատրիարքարան խառն ժողովին գացած ըլլալով, անդ ներկայացան Պալատցի, Սալմաթօմրուխցի, Գարակէօմրիւքցի, Սամաթացի բաւական ան-

ձինք, և այս Թաղերուն գլխաւորներէն, և ամէնը մէկ բերան 'ի զարմացումն ամենեցուն միայ՛ն լսին, և երեք Թաղին մէկ Ժողովական խորհուրդ ընտրելու անօրէնութիւն խնդրեցին։ Յանձնաժողովը գիտողութիւն ըրաւ որ Պալատ արդէն իր առանձին խորհուրդն հաստատած ըլլալով, քանի որ այն կայ, երեք Թաղի մէկէն մէկ ուրիշ խորհուրդի ընտրութեան Թոյլտուութիւն չկրնար ըլլալ. Պալատցիք աճապարեցին պատասխանել որ իրենց խորհուրդը 'ի սէր Միութեան պատրաստ է հրաժարել, ինչպէս որ եղաւ ալ։

Օգոստոս 2. Յանձնաժողովը Պալաթիայ Եկեղեցւոյ մէջ Համախորհուրդ ժողովով Ազգային Երեսփոխանաց բաշխման ցուցակը պատրաստելու ատեն, Յանձնաժողովը Պալատի նորընտիր Ժողովական խորհըրդոյ հրաժարականն ընդունելով, Համաձայնակեաց վարչութեան խառն ժողովին խորհրդովը նոր անօրէնութիւն ըրաւ Պալատի, Սամաթօյմուխի և Բարակէօյրուքի համար. երեքը մէկէն միացեալ Բող հրատարակեց, և երեքին մէկ Ժողովական խորհուրդ ընտրելու հրահանգ տուաւ։

Այսպէս միութեան խնդրոյն ծնած տեսակ տեսակ դժուարութիւններուն հետ զբաղած ատեն, Յանձնաժողովը միանգամայն Ժողովական ընտրութեանց համար ըրած չորրորդ անօրէնութեան գործադրութեանը սպասեցաւ։

Յանձնաժողովին այս չորրորդ Տնօրէնութեամբ իւրաքանչիւր Թաղի Ընտրողական ժողովին հրահանգ տուաւ 1. Ժողովական ընտրողաց և ընտրելեաց ցուցակները 'ի տես ժողովրդեան ութ օր կախել, և սըրբագրել. 2. Բուէարկութիւն և Բուէհամար ընել և քուէից բացարձակ առաւելութեամբ Ժողովական խորհրդականներն ընտրել. և 3. Եթէ առաջին անգամ Բուէարկութեամբ պէտք եղած Թուով անձինք բա-

ցարձակ ատուելութիւն չառնան, պակասներուն կրկնապատիկ թուով ատուելագոյն քուէ առնողներուն մէջէն ընտրելը որոշել, և երկրորդ անգամ Քուէարկութեամբ ու քուէից համեմատական ատուելութեամբ մնացածները ընտրել։

Յանձնաժողովը Թաղական խորհրդոյ ընտրութեան համար իրեն նախատիպ բռնեց Երեսփոխանաց ընտրութեան եղանակը, և անոր համեմատ անօրինեց ընտրական գործողութեանց բոլոր պարագաները։

Յանձնաժողովը Մայրաքաղաքիս ամէն Թաղերուն մէջ միևնոյն ժամանակ և միևնոյն եղանակաւ ընտրութիւնները կատարելու, և ընտրողաց գործը դիւրացունելու նպատակաւ, իւրաքանչիւր Թաղի ընտրողաց Թըւով առանձին ծանուցագրեր և քուէթղթեր տպել տըւաւ, և Քուէարկութեանց պայմանաժամէն մէկ քանի օր առաջ Ընտրողական ժողովներուն ղրկելով, ամէն մէկ ընտրողի ձեռքը հասցունել պատուէր բրաւ։

Այս ծանուցագրերուն մէջ նշանակուած էին Քուէարկութեան տեղը, և սկսելու և վերջանալու պայմանաժամերը։ Միանգամայն ընտրողաց հրաւէր եղած էր ընտրելեաց ցուցակին մէջէն կամ դրսէն ազատօրէն պէտք եղած թուով անձինք ընտրել, և անոնց անունները մականունովն ու արհեստովն հանդերձ քուէթղթին մէջ վերէն ՚ի վար կարգաւ մաքուր գրելով, կամ անձամբ տանիլ Քուէատուփը ձգել, և կամ ստորագրեալ նամակի մը հետ մէկտեղ մասնաւոր պահարանի մէջ ամփոփելով և վրան իրենց անունն ու մականունը գրելով՝ ղրկել։

Յանձնաժողովը հարկ չ'տեսաւ ընտրելեաց ցուցակներն ալ տպելով ընտրողաց ամէն մէկուն ներկայացունել, վասն զի Թաղական խորհրդոյ անդամները ընդհանրապէս Թաղին մէջէն որոշելու սովորութիւն ըլլալով, Թաղեցիք զիրար քաջ ճանչնալնուն պատճառաւ, ամէն

մարդ կրնար դիւրութէ իր ընտրութիւնն ընել, մանաւանդ որ իւրաքանչիւր Թաղի ընտրելեաց ցուցակն ալ Եկեղեցւոյ դրանը կախուած կը կենար 'ի տես ամենից։

Այս նախապատրաստութիւններով ալ գոհ չըլլալով, Յանձնաժողովը ամեն մէկ Թաղի ընտրական գործողութեանց Տեսուչներ ղրկեց Թաղէն դուրս անձինք, և յանձնարարութիւն բրաւ անոնց 1° հսկել այն գործողութեանց օրինաւորապէս կատարմանը, 2° խոհեմութեամբ առաջքը առնուլ չփոթութեանց, և 3° ամեն պարագայից վրայ առանձին Յայտագիր տալ Յանձնաժողովին։

Յունիս 23 կիրակի սկսան ընտրութիւնները Մայրաքաղաքիս գրեթէ բոլոր մեծ Թաղերուն մէջ, և հետևեալ հինգշաբթի 27 Յունիս աւարտեցան Թաղերուն մեծ մասին մէջ։ Մէկ քանի օր ետքը մանր Թաղերուն ընտրութիւններն ալ սկսելով, մէկ քանի օրէն կատարուեցան առանց դժուարութեան։

Միայն Գատըգեղ, Խասգեղ, Բերա և Գասըմփաշա և Գարակէօմրիւք ետ մնացին զանազան պատճառներով։

1° Գատըգեղ. — Գատըգեղի Ընտրողական ժողովոյ Նախագահը ընտրողաց ուզելով ծանուցագրերուն մէջ յանուն Յանձնաժողովոյ իր կողմէն յաւելուած մը բրած ըլլալով, Յանձնաժողովը աճապարեց Ազգային Լրագրի միջոցաւ նոյն յաւելուածին ճշմարիտ հեղինակը Ազգին յայտնել։ Ասոր վրայ Յունիս 23 քուէարկութեան օրը Ընտրողական ժողովոյ մէջ անհամաձայնութի և բողոք պատահելով, և ժողովըրդեան մէջ տարածուելով, ժողովը պատրաստուեր էր քուէհամարը ետ ձգել։ Բողոքեցաւ Յանձնաժողովին. և Յանձնաժողովը Ազգային Լրագրի մէջ յիշեալ յաւելուածին վրայ Նախագահին իր ստորագրութեամբ ծանուցագրին դրել տալով, Քուէհամարը կատարել տուաւ Յուլիս 12ին։

2° Խասգեղ. — Խասգեղ բաւական ժամանակէ 'ի վեր Թաղական հաշուոյ խնդրով մը կը յուզուէր։ Այս անգամ նոր Թաղական խորհրդոյ ընտրութեան համար անօրէնութիւն եղած ատենը՝ ժողովուրդը 'ի սկզբան չուզեց ընդունել, կասկածելով որ գուցէ այս կերպով նախկին Թաղականներէն հաշիւ պահանջելու խնդիրը բոլորովին կը ծածկուի. բայց ետքը համոզուեցաւ, և վստահութիւն քուէարկութեան մասնակցելու վրայ էր, երբ Նեստորական ժողովին պատրաստած ընտրելեաց ցուցակին դէմ՝ ուրիշ ցուցակ մը պարունակող. և միանգամայն Նեստորական ժողովի մէկ քանի անդամները Թշնամանող Յայտարարութիւն մը պատճառաւ, ժողովրդեան մէջ տարաձայնութիւն, և Նեստորական ժողովին մէջ անվստահութիւն ծագեցաւ։ Բայց և այնպէս Յունիս 23 կիրակի քուէարկութեան գործողութիւնը սկսելով, մինչև ժամը 6 խաղաղութեամբ շարունակեց. անկէ ետքը 25 հատ միադիր և միօրինակ ծալլուած քուէներ ներկայանալով, զանոնք ընդունելու կամ մերժելու խնդրոյն վրայ ժողովականաց մէջ կարծեաց տարբերութիւն պատահեցաւ, և ժամանակն ուշ ըլլալով քուէհամարը ուրիշ օրուան ձգուեցաւ։ Այս լսելով՝ Յանձնաժողովը անմիջապէս Տեսուչ զրկեց և Նեստորական ժողովին իմաց տուաւ որ առանց ուշացընելու քուէհամարն ընելու փութան, որպէս զի Թաղին մէջ վրդովման առիթ չ'մնայ։ Սակայն արդէն անհամաձայնութիւնը գժտութեան փոխադրուէր, ժողովականաց մէկ մասը հրաժարական տուեր, և գործը ծանրացեր էր։ Նեստորական ժողովականաց և Նեստորաց մէկ մասը՝ նոյն միօրինակ և նոյնագիր քուէները պէտք է մերժուին կ'ըսէր, և արդէն իսկ ընդունուած քուէներուն վրայ կասկածի երԹալով, քուէարկութիւնը բոլորովին ապօրինաւոր գտնել, և նորէն ընել կը պահանջէր. Իսկ միւս մասը՝ ասոր հակառակ՝ քուէարկու-

թեան կատարուած մասը օրինաւոր ճանչնալէն զատ՝ խնդրոյ տակ եղած քուէներն ալ ընդունել կը պնդէր։ Աւստի Տեսուչը՝ այս պարագայից մէջ քուէհամարը ընել խոհեմութիւն չդատելով՝ ձեռնունայն ետ դարձաւ։ Երկու օր ետքը Յանձնաժողովը Ընտրողական ժողովոյ հակակարծիք անդամները հրաւիրելով, և պէտք եղած քննութիւնը ընելով տեսաւ որ երկու կողման պահանջմանց մէջ չափազանցութիւն կայ. և հրաժարեալ ժողովականաց հրաժարականնին ետ առնել տալ չյաջողելով, Յանձնաժողովն անձամբ գնաց ուրբաթ յունիս 5 Խասգեղ, և ՚ի ներկայութեան ժողովականաց և ժողովրդեան՝ խնդրոյ տակ եղած քուէները պատռեց, և արդէն ընդունուած քուէներուն քուէհամարն բրաւ կատարեց։

3°. Բերա և Քասըմբաշա միացեալ. — Բերայի մէջ նախկին Սահմանադրական գժտութեանց տխուր օրերէն սկսեալ անհամաձայնութիւն կը տիրէր։ Այս անհամաձայնութիւնը նոր Թաղական խորհրդոյ ընտրութեան առթիւ արծարծելով, երկու գլխաւոր կուսակցութիւնք երեւան ելան, և ընտրական գործողութիւնները իրենց մրցման ասպարէզ ընտրեցին։ Յանձնաժողովը Ընտրողական ժողովին իմաց տուաւ որ դժգոհ կենայ, և յիշեալ գործողութիւնները չփոթութենէ ազատ պահելու աչալուրջ հսկողութիւն ընէ։ Բայց դժբաղդաբար թէ ընտրողաց, և թէ նոյն իսկ Ընտրողական ժողովականաց մեծաւ մասամբ ցրուեալ ըլլալուն պատճառաւ՝ ընտրական գործողութեանց նախապատրաստութիւններուն մէջ պէտք եղածին չափ զգուշութիւն չէր եղեր։

Եկաւ Քուէարկութեան որոշուած օրը յունիս 30. Յանձնաժողովը իր կողմէն Տեսուչ ղրկեր էր Ընտրողական ժողովին օգնելու, միանգամայն և ընտրական գործողութեանց առանց չփոթութեան օրինաւոր կերպով կատարմանը հրս-

կելու պաշտօնով ։ Քուէարկութեան ժամանակ յիշեալ կուսակցութեանց նախանձախնդրութիւնը և ընտրողաց մեծ մասին անվարժութիւնը՝ ամէն վայրկեան կ'սպառնային գործողութեանց մէջ շփոթութիւն պատճառել · բայց Ընտրողական ժողովը Տեսչին գործակցութեամբը խոհեմութիւն բանեցունելով, Քուէարկութեան ատեանը անկարգութենէ ազատ պահեց, և եկած քուէներէն միայն զանոնք ընդունելով՝ որ կամ Քուէարկուք անձամբ կը բերէին, և կամ Քուէարկուաց կողմէն ուղղակի ղրկուած ըլլալը վստահանալու կերպով կը ներկայանային, յաջողեցաւ խաղաղութեամբ Քուէարկութիւնը կատարել, և Քուէհամարն ընել ։

Բայց որովհետև պէտք եղած Թուով անձինք քուէից բացարձակ առաւելութիւն չկրցան ստանալ, հարկ եղաւ մնացեալներուն համար երկրորդ անգամ Քուէարկութիւն տնօրինել Յուլիս 4 ին ։ Այս եղաւ երկու կուսակցութեանց եռանդը բորբոքելու նոր առիթ · որով՝ ընտրութեան մէջ յաղթանակելու բաղձանքնին այնքան սաստկացաւ որ մէկ քանի օրուան մէջ օրինաւոր մրցումին գժտութեան և խռովութեան կերպարանք առաւ ։

Քուէարկութեան որոշուած օրուան առջի իրկունը Տեսուչը Բերա երթալով տեսաւ որ Թաղին մէջ կուսակցութեանց շնորհիւը շփոթութիւնը 'ի ծայր հասեր, երկրորդ օրուան կ'սպառէ որ կռուոյ փոխուի · և որովհետև Ընտրողական ժողովը ասոր առաջքն առնելու պէտք եղած միջոցները չ'էր կրցեր կանխաւ տնօրինել, ուստի Քուէարկութեան գործողութիւնը վտանգի մէջ չ'ձգելու , միանգամայն և Թաղը վրդովմունքէ ազատելու դիտմամբ , Տեսուչը պատշաճ դատեց հետևեալ օրուան համար Քուէարկութիւնը արգիլել, և Եկեղեցւոյ բակը Ազդագիր դնելով, այս որոշումը ընտրողաց հաղորդեց ։

Հետևեալ օրը Ընտրողական ժողովոյ մէկ քանի անդամներն հրաժարական տուին ։ Յանձնաժողովը փութաց անոնց ազգասիրութեանը կոչում ընելով, խնդրել որ այսպիսի պարագայից մէջ ետ չքաշուին ։

Մէկ երկու օր ետքը՝ Ընտրողական ժողովին միւս անդամները կը ժողվին, և Թաղին վրդովմանը առիթ ընծայող անձինքը հանդարտեցունելով, ընտրութեան համար որոշում կ'ընեն Յուլիս 9 երեքշաբթի՝ ժամը 7 էն մինչև 11 Քուէարկութիւն ընել, և գիշերը Քուէհամար կատարել. և քուէներու քննութեան տաղտուկէն ազատելու և շփոթութեան տեղի չտալու համար, միայն տպագրեալ նամակաւ եկածներն ընդունիլ կ'որոշեն, և այս որոշումները ընտրողաց կը հաղորդեն Եկեղեցւոյ դուռը Ազդագիր դնելով, և Եկեղեցւոյ մէջ մէկ քանի անգամ ծանուցում ընել տալով ։

Արդարև որոշեալ օրը Քուէարկութիւնը և Քուէհամարը կատարուեցան առանց շփոթութեան, և արդիւնքը Յանձնաժողովին հաղորդուեցաւ հետևեալ ուրբաթ օր ։

Այս արդեանց Յայտագրին հետ Յանձնաժողովին ներկայացաւ նաև բազմաթիւ ստորագրութեամբ Բողոքագիր մը, որով Բերայի ընտրողք կը բողոքէին վերջին Քուէարկութե̃ դէմ, պատճառելով որ իրենք այս քուէարկութե̃ համար առանձին ծանուցագիր առած չըլլալով, Քուէարկութեան օրը չէին գիտցեր, ուստի և քուէ չէին կրցեր տալ, որով իրենց ընտրական իրաւունքէն զրկուած ըլլալնին կը յայտնէին. միանգամայն կը բողոքէին որ Ընտրողական ժողովը այս անգամ առանց նամակի և միայն պահարանի մէջ ամփոփուած քուէները մերժելով, զրկողութիւն ըրած է ընտրողաց մեծ մասին, ևայլն ։

Յանձնաժողովը Բերայի Յայտագրին մէջ պակասու-

Թիւններ նշմարելով, կատարելագործութեան համար
դարձեալ Ընտրողական ժողովին ղրկել պատշաճ դատեց,
միանգամայն ընտրողաց Յորդորագիրն ալ ղրկեց անոր, և
դիտողութիւն ըրաւ «Թէ որդեօք վերջին անգամ կատար-
ուած Քուէարկութեան համար ընտրողաց ծանուցա-
գիր չղրկելով, և ուրիշ Թաղերու մէջ եղածին նման՝
առանց նամակի՝ բայց քուէարկուաց կողմէն ուղ-
ղակի ղրկուած ըլլալնուն փաստահանալու կերպով ներ-
կայացած քուէները մերժելով, զրկանաց պատճառ
չէ՞ տրուեր, և թէ հնարը չկա՞յ արդարադատ ու-
նորէնութեամբ Թաղին ընտրողները գոհ, և խաղա-
ղութիւնը անեղծ պահելու»։

Ընտրողական ժողովը Յայտագրին պէտք եղած կա-
տարելագործութիւնը չըլլանալով, վերոյիշեալ դիտողու-
թեանց պատասխանեց որ «ինք ամենեւին զրկանք ըրած
չէ մէկուն, և թէ ըստ Սահմանադրութեան պարտա-
ւորեալ էր առանց նամակի քուէները մերժելու, թէեւ
զրկողը խիստ ծանօթ, և պահարանին վրայ իր ձեռօք
ստորագրութիւն դրած ըլլայ։ Նաեւ այս անգամ Քուէ-
արկութեան համար Եկեղեցւոյ դրան Ազդագիրը բա-
ւական եղած էր ընտրողաց ամեն բան ծանուցանելու,
ինչպէս որ եկած քուէներուն թիւը կը ցուցրնէ, որ
ուրիշ անգամ Երկրորդ Քուէարկութեան համար
ղրկուածներէն շատ է»։ Ընտրողական ժողովը կ'իմա-
ցունէր նաեւ որ բողոքողները կանչելով համոզել ջա-
նացեր է, բայց անոնք չհամոզուելով Վարչութեան
դիմեր են։

Յանձնաժողովը նկատելով որ Ընտրողական ժողովի
այս գործողութեանց մէջ Սահմանադրութեան դէմ
ապօրինաւորութիւն չկայ, ընդունեց Յայտագիրը,
վաւերացոյց ընտրութիւնը, և ընտրեալներն հաստա-
տեց իբրեւ Թաղական խորհրդական՝ Պատրիարքական
Տեղապահի կոնդակաւ, ինչպէս ուրիշ Թաղերուն
ըրած էր։

4°. Քարակէօմրիւք. — Այս Թաղը և Սալմաթօմրուխ և Պալատ երեքը մէկէն Օգոստոս 2 ին Ս՛խայեալ-Բող հրատարակելէն ետքը՝ Յանձնաժողովը մէկերկու օրէն պէտք եղած ծանուցագրերը և քուէթղթերը պատրաստելով ղրկեց Ընտրողական ժողովին՝ որուն անդամ անուանած էր Պալատի և Քարակէօմրիւքի Եկեղեցեաց նախկին Թաղական գործակալները, և Սալմաթօմրուխէն ու Ալթայի Թաղերէն 6 անձինք։ Քուէարկութեան օր որոշուած էր Օգոստոս 11. և Սալմաթօմրուխի Դպրոցը երեք Թաղից կեդրոնն ըլլալով, տեղի յատկացած էր ընտրական գործողութեանց։ Յանձնաժողովը կ'ակնկալէր որ երեք Թաղեցիք համակամութեամբ մ—բ—ն խնդրելէն ետքը՝ այլ ևս շփոթութեան երկիւղ չկար. ուստի ընտրական գործողութեանց միայն օրինաւոր կերպով կատարմանը հսկելու համար Տեսուչ կարգեց ուրիշ Թաղէ բանիբուն մէկը, և խնդրեց որ նոյն օրը ներկայ գտնուի յիշեալ Դպրոցը։

Բայց Օգոստոս 8 ին՝ Ղալաթիոյ խորհրդարանը եկան՝ նախ Պալատէն մէկ քանի հոգի, և յայտնեցին որ Սալմաթօմրուխի մէջէն այն անձինք՝ որ միութիւն կը խնդրէին, հիմա մեծ մասամբ կարծիքնին յեղափոխած ըլլալով, առաջիկայ ընտրութիւնը արգիլելու համար Թաղին մէջ շփոթութիւն ձգելու կը նկրտին։ Ուստի Քուէարկութեանց գործողութիւնը ապահովելու համար խնդրեցին որ որոշուած օրը Սալմաթօմրուխի Դըպրոցը ղրկուի, ոչ միայն Յանձնաժողովին կողմէն Տեսուչ մը, այլ և Վարչութեան խառն ժողովին կողմէն Հսկող մը։

Քիչ մը ետքը ներկայացան Քարակէօմրիւքէն և Սալմաթօմրուխէն 30 ի չափ անձինք՝ Քարակէօմրիւքի Թաղական գործակալաց առաջնորդութեամբ, և Օգոստոս 2 ին անօրէնութեան դէմ բողոքելով, խնդրե-

ցին որ Գալատա և Բարակէօմրիւք զատ խորհուրդ ունենան, Սամաթօմրուխը ամբողջ Բարակէօմրիւքին հետ միալով։

Նոյն օրերը Վարչութիւնն ալ խմանալով որ Բարակէօմրիւքի Թաղականք ցրուեր են, և Էյիւպեցին և Գումգաբուն երեսի վրայ և անպաշտպան մնացեր են, Բարակէօմրիւքի Թաղին առժամանակեայ Տեսուչ կարգեր էր Գալաթիոյ Տ. Յարութիւն հայրը և Սամաթիոյ Թաղական ատենապետ Գէորգեան Էբիկ աղան. և այս տնօրէնութիւնը Յանձնաժողովին հաղորդելով՝ զանոնք միայն Բարակէօմրիւքի օրինաւոր ներկայացուցիչ ճանչնալ հրաւիրած էր։

Այս խառնաշփոթ վիճակին մէջ Յանձնաժողովը խոհեմութիւն գտաւ նոր տնօրէնութիւն ընելէն առաջ Վարչութեան դիմել, և գործին վիճակը նկարագրելով խորհուրդ խնդրել թէ "Օգոստոս 2 ին Ազգ. Ժող. համար Վարչութեան խորհրդովը եղած տնօրէնութեան գործադրութիւնը մի պէտք է շարունակել, եթէ զանի փոխելով Գալատ, Սամաթօմրուխ և Բարակէօմրիւք երեք Թաղերը դարձեալ երկուքի բաժնելով՝ երկու Թաղական խորհուրդ ընտրել տալ. և եթէ այս վերջինն ընդունել հարկ ըլլայ, Բարակէօմրիւքի և Գալատի սահմաններն որո՞նք են յաչս Վարչութեան"։

Վարչութիւնն այս գրոյն ուղղակի չպատասխանելով. ընտրութեան համար որոշուած օրը յիշեալ Թաղերուն մէջ շփոթութիւն չպատահելուն մանաւոր հոգածութեամբ հսկողութիւն ըրաւ, որով նոյն օրը և նաև հետևեալ հինգշաբթի օրը Սամաթօմրուխի Գումգաբին մէջ Միացեալ Թաղից Թաղական խորհրդոյ ընտրութեան համար առաջին և երկրորդ Քուէարկութիւններն և Քուէհամարները ամենայն խաղաղութեամբ կատարուեցան, և Յայտագիրը ղրկուեցաւ Յանձնաժողովին։

Յանձնաժողովը Յայտագրին մէջ ընտրական բոլոր գործողութեանց օրինաւոր կերպով կարգադրուած ըլլալը տեսնելով, և մանաւորապէս նկատելով որ առաջին Քուէարկութեան ժամանակ եղած 529 քուէներէն 318ը Սալմաթոմրուխի բնակիչներէն ղրկուեր են, ընտրութիւնը վաւերացոյց, և Պատրիարքական Տեղապահի կոնդակաւ նորընտիր Խորհուրդը հաստատեց։

Ահա ասոնք են այն Թաղերը՝ որոնք Թաղական խորհրդոց ընտրութեան առթիւ Յանձնաժողովին քիչ շատ աշխատութիւն պատճառեցին։ Իսկ միւս Թաղերուն մէջ ընտրական գործողութիւնները խաղաղութեամբ կատարուեցան, և բայց ՚ի Կէօփրիւպաշը և Իւսկիւտար Ս. Խաչ Թաղերէն՝ ուր փոքրիկ սխալմունք պատահելով, անմիջապէս և առանց վրդովման և դիւրութեամբ ուղղուեցան, ամենևին մէկ Թաղ մը ոչ Քուէարկութեան և ոչ Քուէհամարի մէջ բնաւ սխալ կամ շփոթ չտեսնուեցաւ։ Ըսել չէ որ այս գործողութեանց մէջ բնաւին դժուարութիւն պատճառող պարագայներ չկային. ընտրողաց շատութիւնը, և ամառային եղանակի պատճառաւ Կ. Պոլսոյ հեռաւոր Թաղերուն մէջ ցիրուցան բնակութիւնը, և ընդհանրապէս Քուէարկութեան մասին շատերուն անվարժութիւնը՝ բաւական պատճառներ էին Ընտրողական ժողովոց ճարտարութիւնը փորձելու, բայց պարտ է խոստովանիլ որ այս փորձին մէջ այս Ժողովներուն գրեթէ ամենն ալ՝ Յանձնաժողովին կողմէն Տեսուչ ղրկուած անձանց աջակցութեամբ՝ յաղթական հանդիսացան։

Միայն սա պէտք է գիտնալ որ Յանձնաժողովը Թէպէտև ընտրողաց ուղղեալ ծանուցագրերուն մէջ «Քուէնին անձամբ բերել, և կամ եթէ պատճառաւ մը չկրնան գալ՝ ստորագրեալ նամակի մը հետ մէկուն մասնաւոր պահարանի մէջ ամփոփելով և վրան անուննին ու մականուննին գրելով Քուէատուփը ղրկել» պատուի-

բե՛ր էր, սակայն գործադրութեան մէջ վերոյիշեալ պարագայից նկատմամբ պարտաւորեցաւ ներողամտութեամբ վարուիլ, և իբրև օրինաւոր ընդունեց այն Բուէները որոնք առանց նամակի միայն պահարանի մէջ դրկուեցան, բայց պահարանին վրայ ընտրողին ստորագրութիւնը, և քուէն բերողին ու Ընտրողական ժողովականաց վկայութիւնը կը վաւերացունէին որ ուղղակի Բուէարկուաց կողմէն դրկուած են ։

Այսպէս կատարեցաւ Մայրաքաղաքիս բոլոր Թաղերուն Թաղական վարչութեան խորհրդոց ընտրութիւնը. ՚ի բաց առեալ Պէյլէրպէյի, Այաստեֆանօ, Մաքրըգեղ, Գընալը կղզի, Աճէմօղլի և Բալթալ, որոնք խիստ հեռաւոր ըլլալով, կամ խիստ քիչ բնակիչ ունենալով, Յանձնաժողովը կարևորութիւն չտեսաւ և դիւրութիւն ալ չունեցաւ Թաղական ընտրութիւններն անմիջապէս տնօրինելու ։

Թաղական ընտրութիւնները ամբողջանալուն պէս, Յանձնաժողովը հինգերորդ Տնօրէնութիւն հրատարակեց, որով հրահանգ տուաւ Ընտրողական ժողովոյ Նախագահներուն՝ ընտրեալս հրաւիրել, Խորհուրդը կազմել, և դիւանի անդամները և Թաղական ուրիշ պաշտօնակալները ընտրել տալով, Խորհուրդը ըստ օրինի գործի սկսել տալ ։

Բայց որովհետև Թաղական խորհրդականութեան պաշտօնը 4 տարի տևողութիւն ունի, անհնարին էր որ ամէն ընտրեալք առանց բացառութեան ընդունէին այս պաշտօնը ։ Ուստի հրաժարում պատահելիքը նախատեսելով, Յանձնաժողովը պատշաճ դատեց արտօնութիւն տալ Ընտրողական ժողովոց որ վերջին Բուէհամարը ո–ն օր բաց նկատեն, և օրինաւոր պատճառաւ ու գրով հրաժարական տուողներուն տեղ, թէ որ իրենց ընկերներուն յորդորանացը չհամոզին և կրկին հրաժարականնին, Բուէհամարի

որդեանց նայելով անմիջապէս առաւելագոյն քուէ առացողները հրաւիրեն, և հրաժարեալներուն տեղը լեցունելով Խորհուրդին կազմութիւնը ամբողջացունեն ։

Այս պարագայիս մէջ ալ Յանձնաժողովը կանոնաւորութեան միանգամայն և Ընտրողական ժողովոց դիւրութեան համար՝ հրաւիրելոց ղրկուելու նամակները ինք պատրաստեց և ղրկեց Թաղերուն ։

Նորընտիր Թաղականաց մէջ հրաժարական տուող բաւական անձինք գտնուեցան ։ Բայց ըստ անօրէնութեան Յանձնաժողովին յաջորդները անոնց տեղ առնուելով, վերջապէս ամեն Թաղերուն մէջ Խորհուրդները կազմուեցան, և Յանձնաժողովը անոնց ամենուն Պատրիարքական Տեղապահի կնիքով ընտրութիւնները պաշտօնական կերպով վաւերացուց, և սկսաւ Երեսփոխանական ընտրութեանց անօրէնութեան ձեռնարկել։

Աստ կը դնենք բոլոր Թաղական ընտրութեանց պատկերը, որ կը ներկայացունէ իւրաքանչիւր Թաղի ընտրողաց և քուէարկուաց թիւերը, Քուէարկութեանց թուականները և ընտրելոց, հրաժարելոց և յաջորդաց անունները ։

## ՀԱՆՐԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐ

### ԹԱՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

### 1° ԲՈՒՄԲԵՐՈՒ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻ

ԸՆՏՐՈՂՔ — 1264

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ 1863 — ՔՈՒԷ 591

” ԵՐԿՐՈՐԴ 27 ” ” — ” 720

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Բաղախեան Եղաքել աղա
2. Սմբատեան Յարութիւն աղա

3 · Վարդանեան Պօղոս աղա
4 · Զարդարեան Գէորգ աղա
5 · Արշակ Յակոբ աղա
6 · Այվատեան Մատթէոս աղա
7 · Անուխեան Սերովբէ աղա
8 · Նշանեան Յակոբճան աղա
9 · Ալթունճեան Համբարձում աղա
10 · Ժամկոչեան Պօղոս աղա
11 · Երկան Գրիգոր աղա
12 · Հարենց Աբրահամ աղա

### ՀՐԱԺԱՐԵԱԼՔ

1 · Բացախեան Առաքել աղա
2 · Ամբատեան Յարութիւն աղա
3 · Նշանեան Յակոբճան աղա
4 · Հարենց Աբրահամ աղա
5 · Երկան Գրիգոր աղա

### ՅԱՋՈՐԴՔ

1 · Անկրաչեան Գրիգոր աղա Կիւմիւշճի
2 · Մամիկոնեան Սահակ աղա
3 · Ճիլաճեան Պօղոս աղա
4 · Թօքատլեան Բարթող աղա
5 · Մամիկոնեան Միքայէլ աղա

## 2° ԲՈՒՄԲԱՐՈՒԻ ԴՈՒՐՍ

### ԸՆՏՐՈՂՔ — 187

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 119
" ԵՐԿՐՈՐԴ 30 " — " 125

### ԸՆՏՐԵԱԼՔ

1 · Էքսերճեան Գրիգոր աղա Թիւլպէնտճի
2 · Զատէեան Ղազարոս աղա Անթիքաճի
3 · Բիւրքճեան Ռուբէն աղա Տպագրիչ
4 · Ալաճաճեան Նիկողոս աղա Պէզազ

5 · Սաքայեան Յովակիմ աղա Սարրաֆ
6 · Սահակ աղա Պէզազ
7 · Գէորգ աղա Գրագիր Պատրիարքարանի

## 3° ԿԷՏԻԿՓԱՇԱ

### ԸՆՏՐՈՂՔ — 440

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 201
" ԵՐԿՐՈՐԴ 27 " — " 206

### ԸՆՏՐԵԱԼՔ

1 · Էտիրնեցի Պապիկ աղա
2 · Ասլանեան Յովհաննէս աղա
3 · Սինանեան Գրիգոր աղա
4 · Պանտրմացի Յովհաննէս աղա
5 · Քուռուեան Գասպար աղա
6 · Ամպարճի Յովսէփ աղա
7 · Թովմաեան Թագւոր աղա
8 · Լէմոնճեան Նազարէթ աղա
9 · Ալաճաճի Գրիգոր աղա

### ՀՐԱԺԱՐԵԱԼ

1 · Թովմաեան Թագւոր աղա

### ՅԱՋՈՐԴ

1 · Կիւմիւշճի Սերովբէ աղա

## 4° ԵԷՆԻՔԱՓՈՒ

### ԸՆՏՐՈՂՔ — 368

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 195
" ԵՐԿՐՈՐԴ 30 " — " 211

### ԸՆՏՐԵԱԼՔ

1 · Մինասեան Մկրտիչ աղա
2 · Ունճեան Մկրտիչ աղա
3 · Ֆրէնկեան Մարուքէ աղա
4 · Չէյիզեան Համբարձում աղա

5 · Սիւրէնեան Բուզանդ աղա
6 · Մուրատեան Յարութիւն աղա
7 · Փէրաձէճի Ստեփան աղա
8 · Փափազեան Մաղաք աղա
9 · Միրականեան Յովսէփ աղա

## ՀՐԱԺԱՐԵԱԼՔ

1 · Սիւրէնեան Բուզանդ աղա
2 · Փէրաձէճի Ստեփան աղա

## ՅԱՋՈՐԴՔ

1 · Փափազեան Կարապետ աղա
2 · Եզէկիէլեան Խաչիկ աղա

# 5° ՍԱՄԱԹԻԱ Ս. ԳԷՈՐԳ

## ԸՆՏՐՈՂՔ — 1741

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 862
” ԵՐԿՐՈՐԴ 27 ” — ” 541

## ԸՆՏՐԵԱԼՔ

1 · Աբիկ աղա Գէորգեան
2 · Միսս աղա Սահակեան
3 · Աւետիս աղա Զիլճի
4 · Մ · Յակոբ աղա Վարդանեան
5 · Մինաս աղա Օհաննեան
6 · Գէորգ աղա Քաքմաճի
7 · Սահակ աղա Քէրէստէճի
8 · Յովսէփ աղա Կիւմիւշճի
9 · Յովհաննէս աղա Սահաթճի
10 · Պօղոս աղա Հիւսէյինճի
11 · Յովհաննէս աղա Մինասեան
12 · Յարութիւն աղա Աբրճրեան

## 6° ՍԱՄԱԹԻԱ Ս. ՅԱԿՈԲ (ԽԷՆԻ ՄԱՀԱԼԼԷ)

### ԸՆՏՐՈՂՔ — 200

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 108
” ԵՐԿՐՈՐԴ 27 ” — ” 112

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Աքսար Մ. Յակոբ աղա
2. Թօմպաքճի Պետրոս աղա
3. Փլինճանճի Մ. Խաչիկ աղա
4. Ճիլաճի Գէորգ աղա
5. Ճապի Մ. Յովակիմ աղա
6. Հացագործ Ալեքսան աղա
7. Զիլճի Պետրոս աղա

## 7° ՍԱՄԱԹԻԱ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ (ՆԱՐԼԸ ՔԱԲՈՒ)

### ԸՆՏՐՈՂՔ — 227

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 85
” ԵՐԿՐՈՐԴ 27 ” — ” 145

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Գրիգոր աղա Ալահվէրտեան
2. Յովսէփ աղա Զիլճեան
3. Յովհաննէս աղա Բաքամաճեան
4. Մկրտիչ աղա Գինեպանեան
5. Աբրահամ աղա Արմուեան

### ՀՐԱԺԱՐԵԱԼ

1. Գրիգոր աղա Ալահվէրտեան

### ՅԱՋՈՐԴ

1. Նշան աղա Նշաստաճեան

## 8. ԹՕՓՔԱՓՈՒ

### ԸՆՏՐՈՂՔ — 395

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՅՈՒՆԻՍ 23 — ՔՈՒԷ 280
„ ԵՐԿՐՈՐԴ 27 — „ 298

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Խաչատուր աղա Ախտէր
2. Գրիգոր աղա Թիւլպէնտճի
3. Արիստակէս աղա Տէօքմէճի
4. Մերովբէ աղա Սարրաֆ
5. Մինաս աղա Նրէցեան
6. Ստեփան աղա Սարրաֆ
7. Թորոս աղա Սալթաճի

ՊԱԼԱՏ Սալմաթօմրուքի բնակիչներէն իրեն ինկած բաժնին հետ միացաւ։ (Տե՛ս երես 18)

### ԸՆՏՐՈՂՔ — 658

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 249
„ ԵՐԿՐՈՐԴ 27 „ — „ 270

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Բարսեան Յակոբ աղա
2. Ֆրէնկեան Մկրտիչ աղա
3. Բալֆաեան Նշան աղա
4. Ֆրէնկեան Աբրահամ աղա
5. Յովսէփեան Կարապետ աղա
6. Ղազարոսեան Կարապետ աղա
7. Ծերունեան Յակոբ աղա
8. Մերկերեան Յովակիմ աղա
9. Մանուկեան Պօղոս աղա
10. Մուրատեան Աբրահամ աղա
11. Համբարձումեան Ադամ աղա
12. Բատըեան Յովհաննէս աղա

Ասոնց ամէնը մէկէն հրաժարեցան Յուլիս 30ին,

*Ի սէր միութեան Սալմաթօմրուխ և Գարակէօմրիւք և Մալթա թաղերուն հետ։*

*Այս խորհուրդին յաջորդեց հետեւեալ խորհուրդը։*

## 9. ՊԱԼԱՏ. ՍԱԼՄԱԹՕՄՐՈՒԽ ամբողջ, և ԳԱՐԱ ԿԷՕՄՐԻՒՔ թաղերը։ (Տե՛ս էջը 37)

ԸՆՏՐՈՂՔ — 1205

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 11 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 529

" ԵՐԿՐՈՐԴ 15 " — " 530

ԸՆՏՐԵԱԼՔ

1. *Աբրահամ աղա Ֆրէնկեան*
2. *Կարապետ աղա Յովսէփեան*
3. *Մկրտիչ աղա Ֆրէնկեան*
4. *Գաբրիէլ աղա Կարապետեան*
5. *Աբգար աղա Բիլթայճեան*
6. *Շահնազար աղա Մաղաքեան*
7. *Նշան աղա Բալֆաեան*
8. *Աբրահամ աղա Մուրատեան*
9. *Խաչիկ աղա Բարթամեան*
10. *Ճանիկ աղա Յակոբեան*
11. *Յակոբ Բարսեան*
12. *Պաղտասար աղա Կիւմիւշճի*

## 10. ԷՅՈՒՊ Ս. ԵՂԻԱ

ԸՆՏՐՈՂՔ — 188

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 30 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 141

" ԵՐԿՐՈՐԴ 4 ՅՈՒԼԻՍ — " 132

ԸՆՏՐԵԱԼՔ

1. *Յովհաննիսեան Մ. Մարգար աղա Երուա*
2. *Թէոփիլէ աղա Պօղոսեան*
3. *Մ. Յովհաննէս աղա Յարութիւնեան Ոսկերիչ*

4. Կարապետ աղա Ջիլլըեան Դերձակ
5. Սահփանեան Մ. Պօղոս աղա Բրուտ

## 11. ԷՅՈՒՊ Ս. ԷՍՏՈՒՃՕՒՃՕՒՆ

ԸՆՏՐՈՂՔ — 82

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 30 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 63

″ ԵՐԿՐՈՐԴ 3 ՅՈՒԼԻՍ — ՔՈՒԷ

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Յարութիւն աղա Սամպօլեան
2. Մարտիրոս աղա Փէրաճէճի
3. Յակոբ աղա Ներկարար
4. Մ. Մարտիրոս աղա Օքնճիճի
5. Պետրոս աղա Բրուտ

## 12. ԽԱՍԳԻՒՂ

ԸՆՏՐՈՂՔ 725

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 369

″ ԵՐԿՐՈՐԴ 11 ՅՈՒԼԻՍ — ″ 261

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Միքայէլ աղա Շամթօնեան
2. Մատթէոս աղա Բալէնտէրեան
3. Յովհաննէս աղա Հովուեան
4. Կիւրեղ աղա Բարունակեան
5. Սիմէօն աղա Միքայէլեան
6. Շամթօն Գրիգոր Էֆէնտի
7. Գրիգոր աղա Սէմէրճեան
8. Մկրտիչ աղա Սիմէօնեան
9. Ղազար աղա Բալմնտէրեան

## 13° ԲԵՐԱ ԵՒ ՔԱՍԸՄՓԱՇԱ (Վայէալ)

### ԸՆՏՐՈՂՔ — 1332

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 30 ՅՈՒՆԻՍ ՔՈՒԷ — 619

» ԵՐԿՐՈՐԴ 9 ՅՈՒԼԻՍ » — 425

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Եփրեմ աղա Սերովբեան
2. Յակոբ աղա Նշանեան
3. Աբեթիկ աղա Նեվրուզեան
4. Մարտիրոս աղա Մուհէնտիզեան
5. Յակոբ աղա Նորատունկեան
6. Յովակիմ աղա Նեվրուզեան
7. Յարութիւն աղա Թագւորեան
8. Յակոբ աղա Բաղաղեան
9. Տօքթէօռ Ռաֆայելեան
10. Աբիկ աղա Ունճեան
11. Յարութիւն աղա Չրպըքճեան
12. Ռուբէն աղա Ռուբինեան

### ՀՐԱԺԱՐԵԱԼՔ

1. Յակոբ աղա Նշանեան
2. Յովակիմ աղա Նեվրուզեան

### ՅԱՋՈՐԴՔ

1. Մանուկ աղա Ասլանեան
2. Լութֆի աղա Լութֆեան

## 14° ԴԱԼԱԹԻԱ

### ԸՆՏՐՈՂՔ — 53

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ 7 ՅՈՒԼԻՍ — ՔՈՒԷ 49

1. Համբար Դափտան
2. Թագւոր աղա Մելքեան
3. Յարութիւն աղա Մըսըրլեան
4. Մարտիրոս աղա Ճինտեան
5. Պետրոս աղա Ռոկերիչ

## 15. ՊԷՇԻԿԹԱՇ

### ԸՆՏՐՈՂՔ — 350

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 179

» ԵՐԿՐՈՐԴ 27 » — » 161

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Կարապետ աղա Թօգաթլեան
2. Ճիվան աղա Միսաքեան
3. Անդրանիկ պէյ Կրճիկեան
4. Մ. Պօղոս աղա Փընտըքլեան
5. Միքայէլ աղա Յօկօբեան
6. Նիկողոս աղա Սուլուխանեան
7. Իգնա աղա Ալթունեան
8. Գրիգոր աղա Թորոսեան
9. Ղազարոս աղա Ալեքսանեան
10. Կարապետ աղա Իւթիւճեան
11. Ներսէս էֆէնտի Տատեան
12. Սարգիս աղա Թագւորեան

### ՀՐԱԺԱՐԵԱԼ

1. Նիկողոս աղա Սարուխանեան

### ՅԱՋՈՐԴ

1. Յօհան աղա Ռափայելեան

## 16. ՕՐԹԱԳԻՒՂ

### ԸՆՏՐՈՂՔ — 423

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 203

» ԵՐԿՐՈՐԴ 30 » — » 186

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Ալեանաքեան Խաչիկ աղա
2. Աշնանեան Նիկողոս աղա
3. Արզումանեան Միքայէլ աղա
4. Յակոբեան Թովմա աղա

5 · Տամատեան Յակոբ աղա
6 · Խուրեան Թումաճան աղա
7 · Պետրոսեան Մարգար աղա
8 · Ճանըմեան Յովհաննէս աղա
9 · Պիւրքճիւխանլեան Մուրատ աղա

## 17. ԳՈՒՐՈՒՉԷՇՄԷ

### ԸՆՏՐՈՂՔ — 93

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 86
" ԵՐԿՐՈՐԴ 27 " — " 83

### ԸՆՏՐԵԱԼՔ

1 · Կիւմիւշճեան Գասպար աղա
2 · Վարդանեան Մարգար աղա
3 · Երկանեան Գէորգ աղա
4 · Թորոսեան Գրիգոր աղա
5 · Տօղրամաճեան Պօղոս աղա

### ՀՐԱԺԱՐԵԱԼ

1 · Թորոսեան Գրիգոր աղա

### ՅԱՋՈՐԴ

1 · Երկանեան Եղիա աղա

## 18. ՀԻՍԱՐ

### ԸՆՏՐՈՂՔ — 124

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՅՈՒՆԻՍ 23 — ՔՈՒԷ 111
" ԵՐԿՐՈՐԴ " 28 — " 110

### ԸՆՏՐԵԱԼՔ

1 · Յովհաննէսեան Սիմոն աղա
2 · Չիզմէճեան Յովհաննէս աղա
3 · Դաւիթ աղա Մոլտովաքեան
4 · Յակոբ աղա Մուպահեաճեան
5 · Սիմոն աղա Պետրոսեան

## 19. ՊՕՅԱՃԸԳԻՒՂ

ԸՆՏՐՈՂՔ — 31

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 31
» ԵՐԿՐՈՐԴ 27 » — » 26

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Յովհաննէս աղա Թիւֆէքճեան
2. Յովհաննէս աղա Թէլեան
3. Պօղոս աղա Չիլինկիրեան
4. Մանուկ աղա Վարդանեան
5. Գրիգոր աղա Նազարեան

## 20. ՆՈՐ ԳԻՒՂ ԵՒ ՍԹԻՆԵԱ (Միացեալ)

ԸՆՏՐՈՂՔ — 113

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 30 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 103
» ԵՐԿՐՈՐԴ 4 ՅՈՒԼԻՍ — » 99

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Պօղաճեան Մ. Աւետիս աղա
2. Պօյաճեան Մարտիկ աղա
3. Հիւսավէրտեան Ենովք աղա
4. Ղազարոսեան Աստուածատուր աղա
5. Թագւորեան Աբրահամ աղա
6. Տօլապճեան Գէորգ աղա
7. Ղազարոսեան Եղիկ աղա

## 21. ՊԷՅՔՕԶ

ԸՆՏՐՈՂՔ — 120

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՅԿՒՆԻՍ — ՔՈՒԷ
» ԵՐԿՐՈՐԴ » — »

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Աստուածատուրեան Գէորգ աղա
2. Գրիգորեան Ռուբէն աղա
3. Խաչատուրեան Վահան աղա

4. Ղազարոսեան Թադէոս աղա
5. Հայրապետեան Շահնիա աղա

## 22. ԳԸՆՏԻՄԼԻ

ԸՆՏՐՈՂՔ — 58

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 7 ՅՈՒԼԻՍ — ՔՈՒԷ 58
» ԵՐԿՐՈՐԴ 8 » — » 30

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Մարտիրոսեան Մեսրոպ աղա
2. Թօփհանէլեան Գէորգ աղա
3. Փէշտըմալճեան Յովհաննէս աղա
4. Շուագեան Յարութիւն աղա
5. Թօփհանէլեան Յովհաննէս աղա

## 23. ԳՈՒԶԳՈՒՆՃՈՒԽ ԵՒ ԽՃԱՏԻՒ (Քայէալ)

ԸՆՏՐՈՂՔ — 217

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 137
» ԵՐԿՐՈՐԴ 28 » — » 151

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Ղազարոս աղա Եաղճեան
2. Ստեփան պէյ Շօլանեան
3. Աւետիս աղա Եազմաճեան
4. Միքայէլ աղա Պէշիրեան
5. Գաբրիէլ աղա Ներշապուհ
6. Կարապետ աղա Միւհէնտիսեան
7. Շնորհիկ աղա Պապայեան

ՀՐԱԺԱՐԵԱԼ

1. Աւետիս աղա Եազմաճեան

ՅԱՋՈՐԴ

1. Բիւզարեան Մկրտիչ աղա

## 24. ԻՒՍԿԻՒՏԱՐ Ս. ԽԱՉ

### ԸՆՏՐՈՂՔ 300

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 155

„ ԵՐԿՐՈՐԴ 4 ՅՈՒԼԻՍ — „ 156

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Պէհզատ Ուժէտ աղա
2. Տ. Բառնաքասեան Յարութիւն աղա
3. Աբրահամ աղա Սախաեան
4. Նորատունկեան Գրիգոր աղա
5. Գաբրիէլ աղա Գրասէրեան
6. Յարութիւն աղա Մանուէլեան
7. Մ. Յարութիւն աղա Փափազեան
8. Նշան աղա Օտեան
9. Եփրեմ աղա Թօհաֆճի
10. Գրիգոր էֆէնտի Օտեան
11. Յովհաննէս աղա Թօմպարլախեան
12. Մարտիրոս աղա Խամէրեան

### ՀՐԱԺԱՐԵԱԼ

1. Գրիգոր աղա Նորատունկեան

## 25. ԻՒՍԿԻՒՏԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

### ԸՆՏՐՈՂՔ — 293

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 197

„ ԵՐԿՐՈՐԴ 27 „ — ՔՈՒԷ 238

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Մ. Միհրան աղա Զարպխանացի
2. Խաչիկ աղա Կիւլիւճանեան
3. Թովմաս աղա Չայեան
4. Ռափայէլ աղա Պէյազճի
5. Յակոբ աղա Միզանճեան
6. Աբիսողոմ աղա Բաղալ

7. Մենէքերիմ աղա Ճարտարապետ
8. Յարութիւն աղա Նազարեթեան
9. Մաղաք աղա Պասմաճեան

## 26° ԲԱՏՐ. ԳԻՒՂ.

### ԸՆՏՐՈՂՔ — 146

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՅՈՒՆԻՍ — ՔՈՒԷ 102
" ԵՐԿՐՈՐԴ 17 ՅՈՒԼԻՍ — " 84

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Մկրտիչ աղա Աշաթօն
2. Մերովբէ աղա Բերովբեան
3. Սարգիս աղա Դաւիթեան
4. Սարգիս աղա Աշաբէկեան
5. Մ. Պետրոս Բրթիկեան

---

## Դ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Յանձնաժողովը Թաղական խորհրդոց նամ—րեան հրահանգին հետ իր հինգերորդ Տնօրէնութեան մէջ նաև Երեսփոխանական ընտրութեանց համար նոր Ընտրողական ժողով կազմելու հրահանգ տուաւ Թաղերուն:

Այս Տնօրէնութեամբ՝ նորընտիր Թաղական խորհուրդները հրաւիրուեցան Թաղին բնակիչներէն ըստ առաջին Տնօրէնութեան Ընտրողական ժողովական ուրոշուած անձինքը մէկտեղ առնելով, և կամ անոնցմէ պակասածներուն տեղ ուրիշներ ընտրելով Ընտրողական ժողով կազմել, միշտ Քարոզչին՝ և կամ Քարոզչէ չ'գտնուած տեղը Աւագերէցին նախագահութ̃ը ըստ 71դ յօդուածոյ Սահմանադրութեան:

Ընտրողական ժողովին առաջին պարտաւորութիւնն էր Թաղին մէջ Ազգային Երեսփոխանաց ընտրութեանը մասնակցելու պրօք կամ արժանեօք իրաւունք ունեցող-

ները որոշել և ցանկը շինել։ Եւ որովհետև այս ա-
մենակարևոր և խիստ փափուկ գործ մըն էր, և Ազգա-
յին երեսփոխանութենէն առաջ Թաղական խորհուրդ-
ներուն ընտրութիւնը մեծաւ մասամբ անոր համար
հարկաւոր դատուած էր, Յանձնաժողովը դարձեալ
նոյն Տնօրէնութեան մէջ հրահանգ տուաւ Ընտրո-
ղական ժողովոց՝ իրենց նախորդներուն պատրաստած
Երեսփոխանական ընտրողաց ցանկը ձեռք առնել, և
անոր մէջէն զատել Ա. Այն անձինքը որ իրենց
այս տարուան Ընդհանուր տուրք Թերհաշիւ 75 ղուրուշ
ազգային նպաստը շնորհած և անդորրագիր առած ըլ-
լալով, ընտրողութեան իրաւունքնին Նէ-Բուզէ հաստա-
տեր են։ Եւ Բ. Այն անձինքը որ Թէպէտ այս
անգամ 75 ղուրուշ տակաւին չեն վճարած, բայց
ամեն տարի այսքան տուրք և աւելի ալ ելել նուիրած
են Ազգին, և տակաւին տալու ալ կարող են, մինչև
որ Ընտրողական ժողովը անոնց աւելէ ետքն ալ տարին
գոնէ 75 ղուրուշ Ազգային ընդհանուր տուրք վճա-
րելուն վստահ ըլլալով, ընտրողութեան իրաւունքնին
Բորոյալէ հաստատուած կը համարուի։ Եւ Գ.
Ընձնական արժանեօք իրաւունք ունեցողները՝ Սահմա-
նադրութեան 65ն յօդուածին համեմատ։

Իսկ առանցմէ դուրս մնացած և իբրև Երեսփոխանա-
կան ընտրող յիշեալ ցանկին մէջ նշանակուած անձանց
համար՝ Յանձնաժողովը պատուիրեց զանոնք մի առ մի
կանչել կամ հետերնին Թղթակցիլ, և 75 ղուրուշ կան-
խիկ առնելով, կամ առնելիքն ապահովելով վստահա-
ցածներուն անունները՝ վերոյիշեալ երեք կարգերուն
մէջ զետեղել, և այս կերպով Թաղին մէջ Երեսփոխա-
փոխանական ընտրութեան ճշմարտապէս իրաւունք ու-
նեցողներուն բոլորն ալ ճշդել և արդարութեամբ զա-
տել ցանկը, և կարգադրելով այբուբենի վրայ, Յանձ-
նաժողովին ներկայացունել։

Ընտրողական ժողովները ձեռն 'ի գործ առին այս ցանկերը պատրաստելու․ և Յանձնաժողովը գործը գլխւրացունելու, միանգամայն և փութացունելու համար՝ մէկ քանի օրէն երկու հրատարակութիւն ըրաւ։

Առաջինն էր Շրջաբերական գիր առ Ընտրողական ժողովս, որով Յանձնաժողովը կ'իմացունէր թէ Ազգային Երեսփոխանաց բաշխման ցուցակը պիտի պատրաստէ Օգոստոս 2ին անպատճառ․ և որովհետև ատոր համար Յանձնաժողովին հարկ է գիտնալ իւրաքանչիւր թաղի ընտրողաց ճշգրիտ թիւը, Ընտրողական ժողովները կը պարտաւորին աճապարել մինչև նոյն օրը իրենց ցանկերը հասցունելու․ ապա թէ ոչ՝ Յանձնաժողովը ետ մնացողներուն իր կողմէն համեմատաբար ընտրողաց թիւ մը պիտի սահմանէ, և ըստ այնմ պիտի որոշէ անոնց բաժինը, որով կրնայ թաղեցւոց զրկանք ըլլալ․ և ատոր ալ պատասխանատուութիւնը բնականապէս Ընտրողական ժողովոց վրայ կը ծանրանայ։

Երկրորդն էր Պաշտօնական Ազդարարութիւն առ ընտրողս․ ասով Յանձնաժողովը կը ծանուցանէր որ Երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու իրաւունք ունեցողները պարտին մինչև բաշխման օրը իրենց Ընտրողական ժողովին դիմել և իրաւունքնին նիւթապէս կամ բարոյապէս ապահովել․ վասն զի այն օրէն ետքը իրենց իրաւունքն հաստատող անձինք՝ բաշխման օրը իրենց թիւը հաշւոյ մէջ չ'մտնելուն աղագաւ՝ զրկանք ըրած կ'ըլլան իրենց թաղին։ Միանգամայն ընդհանրապէս ժողովրդեան կը զեկուցանէր թէ յիշեալ իրաւանց տէր եղողները պէտք է որ զանի 'ի գործ դնելու փութան, և ատոր համար պէտք եղած տրոց թերհաշիւը այժմէն վճարեն․ վասն զի անոնք որ կարողութիւն ունին և կը զլանան, և հիմա քուէ տալէն փախչելով կը կարծեն որ տուրքէ ալ պիտի ազատին, կը սխալին։ «Ամէն ազգային անհատ որ չափահաս է և վաստակ ու շահու

տէր, պարտական է տրոք մասնակից ըլլալ Ազգային ծախուց» Սահմ. Յօդ. 90։ Ըսել է որ Ազգային Վարչութիւնը ժամանակին ամէն վաստակի տէր անձերէ տուրք պիտի պահանջէ և առնէ, առանց նկատելու թէ քուէ տուած են թէ չէ։

Այս կերպով Յանձնաժողովը գործը ամէն կողմէն ապահովելէն ետքը սպասեց կեցաւ մինչև Օգոստ. 2. քաշման համար որոշուած օրը։

Բայց այն օրէն առաջ Թաղերուն մէկ քանիին մէջ ընտրողական իրաւանց «Եարբյաղէս» ապահովման համար եղած գործողութիւններէն առիթ առնելով տարաձայնութիւն ելաւ իբր «թէ Յանձնաժողովը Երեսփոխանական ընտրողները բազմացունելու դիտմամբ խիստ մեծ դիւրութիւններ կը շնորհէ, և թէ այս ընթացքով նորընտրելի Երեսփոխանութեան հիմունքը ապօրինաւորութեան վրայ դրուելու վտանգի մէջ են»։ Այս խօսքերը հասան մինչև Առժամանակեայ վարչութեան Խառն ժողովին ականջը, որ խռովելով և երկընչելով որ չըլլայ թէ այսպիսի պատահարով մը Սահմանադրութեան հաստատութիւնը չփոթութեանց տեղի տայ, և իր առ Տէրութիւնն ունեցած պատասխանատուութեանը վասն է, կոչեց Յանձնաժողովը 'ի Պատրիարքարան, և բացատրութիւն խնդրեց 'ի Ներկայութեան Բարձրագոյն Դրան և Ազգային Յանձնաժողովոյ անդամոց, որոնց մեծ մասը պակաս էին։ Յանձնաժողովը փութաց իր ըրած Տնօրէնութիւններն ու հրապարակութիւններն 'ի ձեռին՝ անոր խղճի անձկութիւնը փարատել, և համոզեց՝ որ արդի պարագայից մէջ և ազգայնոց մինչև ցայսօր ստակ տալու մասին ըրած տխուր փորձառութեան և արդարացի անվստահութեան առջին՝ հնար չկայ ուրիշ կերպով Սահմանադրութեան հաստատութիւնը յաջողցունելու, և թէ քանի որ Սահմանադրութեան 90ն յօդուածը կանգուն

կը կենայ, 65դ յօդուածը ամենևին երկիւղ չունի վնաս կրելու ։

Յանձնաժողովը հրաւիրեց նաև զննան ժողով Օգոստոս 2 բաշխման ցուցակի պատրաստութեանը ներկայ գտնուիլ փոխանակ Ազգային Քաղաքական և Կրօնական ժողովոց, որոց ներկայութիւնը հարկաւոր կը ճանչնայ այս գործողութեան համար Սահմանադրութեան 69դ յօդուածը ։

Նոյն օրը Պատրիարքական Տեղապահի նախագահութեամբ Յանձնաժողովին ատեան կազմեց Խառն ժողովոյ անդամոց և նորընտիր Քաղաքական խորհրդոյ Ատենապետներուն հետ. և բաշխումն ընելու համար նախևառաջ Թաղերուն ղրկած Երեսփոխանական վաւերական ցանկերը քննութեան առաւ ։ Բայց ՚ի Բերա և Գասըմփաշա, Գալաթա, Սալմաթօմրուխ և Քարակէօմրիւք միացեալ Թաղերէն, և Քանտիլլիէն, ամէն Թաղ իր ցանկը պատրաստած էր ։

Յանձնաժողովը զանոնք մի առ մի կարդաց, և Համախորհուրդ ժողովը տեսաւ որ ըստ մեծի մասին չափաւորուած, և վստահութեան արժանի կերպով տնօրինուած էին. միայն մէկ քանին սրբագրութեան կարօտութիւն կը ցուցընէին, Ժողովը զանոնք յատենի անդ սրբագրեց, և Բերայի ու Գասըմփաշայի համար 450, Գալաթա, Սալմաթօմրուխ և Քարակէօմրիւքի համար 250, և Քանտիլլիի համար 10 ընտրող սահմանելով, բոլոր Թաղերուն ընտրողները գումարեց և տեսաւ որ Կոստանդնուպոլսոյ մէջ Ազգային Երեսփոխանութեան ընտրող ըլլալու իրաւունք ունեցող գտնուեր են 3639 անձինք ։

Ժողովն այս թիւը Կոստանդնուպոլսէն ընտրուելիք 80 Երեսփոխանաց թուովը բաժնեց և գտաւ որ 45 անձանց 1 Երեսփոխան ընտրելու բաժին պիտի իյնայ ։

Բայց որովհետև իւրաքանչիւր Թաղի ընտրողաց

Թիւը ճիշդ 45ով չէր կրնար բաժանուիլ, ժողովը խորհրդակցութեամբ ամեն մէկուն բաժինը որոշեց ընտրանօք, մանր կոտորակի տարբերութիւնները մէկդի ձգելով, և սակաւաթիւ ընտրող ունեցող Թաղերն ալ մեծերուն մէջ չընկղմելու դիտմամբ իրարու հետ միացունելով, առանց միտ դնելու իրարմէ հեռաւորութեան, որ նախատեսեալ էր Սահմանադրութեան 76դ յօդուածով։

Այս կերպով ահա նոյն օրը պատրաստուեցաւ հետեւեալ Բաշխման ցուցակը, որուն մէջ իւրաքանչիւր Թաղի համար որոշուած ընտրողաց և Երեսփոխանաց Թիւերը դէմ առ դէմ կը տեսնուին։

## ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ Կ. ՊՈԼՍՈՅ

| Թիւ. | ԹԱՂ | ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՂՔ | ԵՐԵՍՓՈԽԱՆՔ |
|---|---|---|---|
| 1. | Գումգաբու Մայր Եկեղեցի | 613 | 13 |
| 2. | Կէտիկ փաշա | 177 | 4 |
| 3. | Ենիգաբու | 180 | 4 |
| 4. | Սամաթիա Ս. Գէորգ | 441 | 10 |
| 5. | » Ս. Յակոբ<br>» Ս. Յովհաննէս } միացեալ | 34<br>40 | 2 |
| 6. | Թօփ գաբու | 45 | 1 |
| 7. | Քարակէօմիւրք<br>Սալմաթօմրուք<br>Պալատ } միացեալ | 250 | 5 |
| 8. | Էյուպ Ս. Եղիա<br>» Ս. Աստուածածին } միացեալ | 48<br>2 | 1 |
| 9. | Խասգեղ | 285 | |
| 10. | Գասըմփաշա<br>Բերա } միացեալ | 450 | 6<br>10 |
| 11. | Պէշիկթաշ | 149 | 3 |
| 12. | Օրթագեղ | 224 | 5 |
| 13. | Գուրուչէշմէ | 58 | 1 |
| 14. | Հիսար<br>Պօյաճը գեղ } միացեալ | 30<br>18 | 1 |
| 15. | Սթէնիա<br>Ենի գեղ } միացեալ | 41 | 1 |
| 16. | Պէյքօզ<br>Ղալաթիա } միացեալ | 23<br>24 | 1 |
| 17. | Քուզկունճուք<br>Իճատիէ } միացեալ | 76 | 2 |
| 18. | Իւսկիւտար Ս. Խաչ | 169 | 4 |
| 19. | » Ս. Կարապետ | 180 | 4 |
| 20. | Գատը գեղ<br>Գանտիլլի } միացեալ | 74<br>10 | 2 |
| | | 3639 | 80 |

Բաշխման ցուցակը հրատարակուելուն պէս, Յանձնաժողովը վեցերրորդ Տնօրէնութիւն ընկեց Թաղերուն, և հրաւիրեց որ իւրաքանչիւրն իր բաժնին ինկած Երեսփոխանաց եռապատիկ թուով ընտրելի որոշէ և ցուցակը Յանձնաժողովին ներկայացունէ ։

Այս Տնօրէնութեամբ Յանձնաժողովը Ընտրողական ժողովոց կը յիշեցունէր 1°. Աշխարհական Երեսփոխանաց համար Սահմանադրութեան 68ᵗ յօդուածոյ պահանջած հանգամանքը․ 2°. Կոստանդնուպօլսէն ընտրուելիք 80 Երեսփոխանաց գոնէ 7ը ատենաձանաւոր անձինք ըլլալու հարկաւորութիւնը․ և 3°. Ազգային Երեսփոխանաց՝ զիրենք ընտրող Թաղին բնակիչներէն ըլլալն հարկ չըլլալը, և Ընդհանուր ժողովոյ մէջ ոչ թէ զիրենք ընտրող Թաղին՝ այլ Ազգին Երեսփոխանները ճանչցուելիքը ։

Այս հանգամանք և պարագայները ներկայացունելէն ետքը Յանձնաժողովը կ՚աւելցունէր որ « Ազգային Երեսփոխանութիւնը միանգամ պիտի ընտրուի ամբողջ․ ակէ ետքը երկու տարին անգամ մը ըլլալիք ընտրութիւնները մասնաւոր կը համարուին․ վասն զի անոր միայն հինգերորդ մասը պիտի փոփոխի․ և որովհետև Ազգային Սահմանադրութեան օրինաւոր գործադրութեամբ հաստատութիւնը՝ նաև հինգ տարի ետքը վերաքննութիւնը՝ այսինքն Ազգին ապագան այս անգամ ընտրուելիք Երեսփոխանաց ձեռքն յանձնուած պիտի ըլլայ, Ազգայնոց նուիրական պարտք է հոգ տանիլ որ այնպէս ընդհանուր ընտրութեամբ միանգամ հաստատուելիք Երեսփոխանութիւնը՝ հնար եղածին չափ ամբողջ իր մէջը պարունակէ այն ամեն ազգայինք՝ որ Երեսփոխանութեան համար Սահմանադրութեան պահանջած հանգամանքն ունենալէն զատ, գիտութեամբ, փորձառութեամբ, հանճարով, տաղանդով, և այլ ուրիշ կատարելութեամբ, նա մանաւանդ ազգասիրու-

Թեամբ երեւելի հանդիսացած են Ազգին մէջ։ Ուրեմն Ընտրողական ժողովը պէտք է Թաղական անձուկ գաղափարը մեր կանոնով, ընտրելեաց ժողովը իր Թաղին երեւելիներովը լցուելու տեղ, Ազգին ամէնէն երեւելի անձինքով ձեւացունէ. Թէեւ ընտրողք ազատ են անոր հետեւել կամ չհետեւելու »։

Հաւաստեաւ ցուցակներն հասան Յանձնաժողովին ձեռքը։ Մէջերնին միայն մէկ երկուքը սրբագրութեն կարող էին. Յանձնաժողովը զանոնք դարձեալ Ընտրողական ժողովոց ձեռօք սրբագրելէն ետքը ամե՛նն ալ տպագրել տուաւ իւրաքանչիւր Թաղի Երեսփոխանական ընտրողաց Թուովը, և զրկեց Ընտրողական ժողովոց։

Ընտրելեաց ցուցակներուն հետ Յանձնաժողովին կողմէն Թաղերը զրկուեցան նաև իւրաքանչիւրին ընտրողաց Թուով քուէԹղԹեր և ծանուցագրեր, որով Ընտրողական ժողովոց կողմէն ընտրողաց կը ծանուցուէր 1° Քուէարկութեան օրը, պայմանաժամը, և տեղը. 2° ընտրուելու Երեսփոխանաց Թիւը և Երեսփոխանութեան համար Սահմանադրութեան պահանջած հանգամանքը. 3° ընտրութեան համար ընտրելեաց ժողովին հետեւել կամ չհետեւելու ազատ ըլլալը. 4° Քուէն ընդունելի ըլլալու համար՝ զանի պատրաստելու, և կամ անձամբ կամ նամակաւ զրկելու եղանակը. և վերջապէս 5° Երեսփոխանական ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցողաց 75 ղրուշի ազգային նպաստ մը ընելու անհրաժեշտ պարտաւորութիւնը։

Նոյն միջոցին Յանձնաժողովը եօթներորդ և վերջին Տնօրէնութիւն մ՚ալ հրատարակելով Ընտրողական ժողովոց հրահանգ տուաւ։

1° Ընտրելեաց և ընտրողաց ցուցակները ութ օր հանդերձ ծանօթութեամբք Եկեղեցւոյ բակը կախել,

և դիտողութիւն ունեցողներն ընդունելով, ընտրողաց ցանկը կատարելագործել։

2° Ցանկերը բացուելէն երեք օր ետքը հաստատիմ գործակալաց ձեռօք ընտրողաց ամեն մէկուն ձեռքը հասցունել ծանուցագիր մը, քուէթուղթ մը և մէկ օրինակ ընտրելեաց ցուցակ։

3° Ընտրելոյ բակը մէկերկու տեղ Ազդագիր դընելով ընտրողաց ծանուցանել որ Ա. ամենն ալ Քուէարկութեան համար մասնաւոր ծանուցագիր պիտի ստանան, և եթէ Քուէարկութեան օրէն գոնէ 24 ժամ յառաջ ծանուցագիրնին չառնեն, Թաղական խորհուրդին պէտք է դիմեն և պահանջեն. Բ. եթէ քուէնին առանց ստորագրեալ նամակի մէջ ծրարելու գաղտնապէս պահարանի մէջ դնեն և վրան իրենց անունը գրելով ղրկեն՝ անընդունելի պիտի ըլլայ։

4° Քուէարկութիւն և Քուէհամար ընել միևնոյն օրը՝ առանց նամակի և գաղտնապէս պահարանի մէջ ղրկուած քուէները պատռելով, և Քուէից բացարձակ առաւելութեամբ ընտրեալները Երեսփոխան հրատարակել։

5° Իսկ եթէ պէտք եղած թուով անձինք քուէից բացարձակ առաւելութիւն չստանան, անոնցմէ անմիջապէս ետքը առաւելագոյն քուէ առնողները՝ պակասներուն կրկնապատիկ թուով ընտրելի ցուցընել, և ուրիշ օր մը երկրորդ անգամ Քուէարկութեամբ և քուէից համեմատական առաւելութեամբ պակասներն ընտրել։

6° Ընտրութեանց արդիւնքը՝ ընտրական գործողութեանց բոլոր պարագաներով հանդերձ մասնաւոր Ցուցագրով Յանձնաժողովին հաղորդել։

Յանձնաժողովն այս վերջին Տնօրէնութիւնը Ընտրողական ժողովոյ յանձնելէն ետքը՝ անոր մանրամասն նկարագրած պարագաները ընդհանրապէս ընտրողաց ամենուն հաղորդելու դիտմամբ 500 օրինակ տպել տուաւ, և Ամսիս լրագրոյ իւր Յաւելուած՝ կցատա-

դնուպօլսոյ բոլոր թաղերուն մէջ տարածեց։ Նոյն Յանձնաժողովը ընտրողաց ուշադրութիւնը դարձուցանել ուզեց Ընտրողական ժողովոց վրայ. և որպէս զի ՚ի մօտոյ հսկող ալ գտնուի, իւրաքանչիւր թաղ մէկ մէկ Տեսուչ ղրկեց թաղէն հեռու բնակող բանիբուն անձինք, և անոնցմէ խնդրեց բոլոր տեսածնուն և գիտցածնուն վրայ մասնաւոր Յայտագիր ղրկել Յանձնաժողովին, որպէս զի Յանձնաժողովը մէկ թաղի գործողութեանց վրայ երկու զանազան աղբիւրներէ տեղեկութիւն առնելով, բաղդատութեամբ ստուգութեանը վերահասու ըլլայ։

Ընտրութիւններն սկսան Կ. Պօլսոյ գրեթէ բոլոր թաղերուն մէջ մի և նոյն օրը Օգոստոս 19, և մէկ շաբաթէն աւարտեցան անոնց մեծ մասին մէջ։

Յանձնաժողովն սկսաւ ստանալ հետզհետէ Ընտրողական ժողովոց և Տեսչաց մասնաւոր Յայտագիրները, և երկրորդ Քուէարկութիւն պէտք եղած թաղերուն, անմիջապէս ծանուցագիրները տպել տալով ժամանակին հասցուց Ընտրողական ժողովներուն ձեռքը։

Այսպէս կատարեցան Երեսփոխանաց ընտրական գործողութիւնները՝ առանց շփոթութեան, առանց վրդովման, և գրեթէ առանց բողոքոյ, Կ. Պօլսոյ բոլոր թաղերուն մէջ։

Այս գործողութեանց մէջ Յանձնաժողովը գոհութեամբ սրտի տեսաւ որ 1° Ընտրողաց ծանուցագրերը ժամանակին ձեռքերնին հասցունելու համար ըրած կարգադրութիւնները, 2° առանց ստորագրեալ նամակի ղրկուած քուէները չ'ընդունելու համար ըրած զգուշութիւնները, և 3° վերջին Տնօրէնութեան Կ. Պօլսոյ մէջ հրատարակութիւնը՝ մեծապէս օգնեցին անոնց անշփոթ կատարմանը, թէպէտև նոր Ընտրողական ժողովոց գործունէութիւնը, Տեսուչնե-

րուն խոհեմութիւնը և Երեսփոխանական ընտրողաց սակաւաթիւ և ընտիր և ընդհանրապէս Քուէարկութեան վարժ անձինք ըլլալը՝ գործին դիւրութեան մեծ առիթ կ'ընծայէին ։

Յանձնաժողովին անախորժ ազդեցութիւն ըրաւ միայն սա պարագայն, որ գրեթէ բոլոր Թաղերուն մէջ ընտրողք ընդհանրապէս անտարբեր երևցան իրենց իրաւունքը 'ի գործ դնելու, ինչպէս ընտրութեանց պատկերը կը ցուցընէ որ Կ. Պոլսոյ 3656 Երեսփոխանական ընտրողներէն ընդամէնը միայն 1899 քուէ հաւաքուած են առաջին Քուէարկութեանց ժամանակ։ Բաւ չէ՞ որ այսքան քուէ բաւական չեն եղած ընտրութիւնները վաւերական գործելու, վասն զի Սահմանադրութեան ոգւոյն և գրոյն համեմատ "Քուէարկութեան համար բոլոր ընտրողք ժամանակին հրաւէր առնելէն ետքը՝ որոշեալ պայմանաժամուն մէջ որքան քուէ գալու ըլլան, բաւական են գործողութիւնը օրինաւոր ընելու, թէև անոնց թիւը ընտրողաց թուոյն համեմատութեամբ խիստ քիչ ըլլայ ։" Բայց և այնպէս Յանձնաժողովը չէր կրնար չ'նշմարել այս պարագայն, որ Թաղական ընտրութեանց մէջ ցոյց տրուած եռանդին յաջորդելովը ուշադրութեան արժանի էր։ Յանձնաժողովը կը կարծէ որ ասոր գլխաւոր պատճառը այն սխալ գաղափարն է, որով ընտրողք Քուէարկութենէ փախչելով, տուրք տալու պարտականութենէն ճողոպրիլ կը յուսան, և զոր ուղղելու համար Յանձնաժողովը Պաշտօնական Ազդարարութեամբ պէտք եղածը հրատարակած էր վայրապար ։

Ընտրութեանց մէջ յիշատակութեան արժանի պարագաներ ընծայեցին միայն Խասգեղ, Գալատ, Սամաթօմրուխ և Քարակէօմրիւք միացեալ Թաղերը ։

1. Խասգեղ. — Խասգեղի Քուէարկութեան հա-

մար որոշուած օրէն երկու օր յառաջ Ընտրողական ժողովոյ միանգամայն և Թաղական խորհրդոյ անդամ երկու ազգասէր և Ազգէն սիրելի անձինք յանկարծական մահուամբ զրկուելով 'ի կենաց, ազգային ամենուն՝ և մանաւորապէս Խասգեղի բնակչաց այն ատխման ցաւ պատճառեցին, որ Քուէարկութեան օրը ընտրողք մեծ մասամբ 'ի սուգ համակեալ՝ չկրցան իրենց ընտրողական իրաւունքն 'ի գործ դնելու սիրտ ունենալ. և որովհետև նոյն օրը Եկեղեցւոյ մէջ ժամերգութիւնն ալ՝ դարձեալ նոյն Հանգուցելոց պաշտօնի պատճառաւ Քուէարկութեան սկսելու պայմանաժամէն ետքը աւարտեցաւ, Ընտրողական ժողովը մինչև ժամը 7 սպասելէն ետքն ալ՝ չկրցաւ 75 քուէէն աւել ժողվել քուէտուփին մէջ. և այսքան քիչ քուէով Քուէհամար ընել պատշաճ չդատելով, քուէտուփը կնքեց, և Յանձնաժողովին դրկեց, յայտ ունելով որ եթէ ընտրողներէն նոյն օրը քուէ չտուողներէն ուրիշ օր մը քուէ չխնդրուի, և Քուէհամարը միայն 75 քուէով կատարուի, մեծ զրկանք կ'ըլլայ Խասգեղի ընտրողաց, և գժտութեան ալ կրնայ առիթ ծագիլ: Յանձնաժողովը՝ Սահմանադրութեան 74ր յօդուածին հակառակ չէր կրնար թոյլ տալ, որ Խասգեղի կնքեալ քուէտուփին մէջ նորէն քուէ աւելցուի, առաջարկեց Ընտրողական ժողովին՝ Օգոստոս 19 ին Քուէարկութիւնը անվաւեր հրատարակելով, քուէտուփը ջնջել, և ուրիշ օր վերստին Քուէարկութիւն ընել. վասն զի վերոյիշեալ օրը արտաքոյ կարգի պատճառաւ մը Քուէարկութիւնը որոշեալ պայմանաժամին ոչ սկսիլ կրցեր էր և ոչ աւարտիլ: Ընտրողական ժողովն այս որոշման հետևելով, Օգոստոս 19 ին քուէները՝ ջնջեց, և Օգոստոս 30 ին վերստին Քուէարկութիւն ընելով, ընտրութիւնը կատարեց ուրիշ թաղերուն նման:

2. Պալատ և Սալմաթօմրուխ և Քարակէօմրիւք. — Այս թաղերը Թաղական խորհրդոյ ընտրութեամբ մինոյն եօթն ալ չկրցան ազատիլ խռովութենէ : Միութեան հակառակ կուսակցութիւնք բողոք ընելէն չդադրեցան, և նորընտիր Թաղական խորհուրդը թէ իր թաղին նկատմամբ ունեցած պաշտօնին, և թէ Երեսփոխանական ընտրութեան մասին ունեցած պարտաւորութիւններուն կատարման մէջ շատ դժուարութիւններ կրեց : Ընտրողական Ժողովը ուրիշ թաղերուն պէս 7ն Տնօրէնութեան համեմատ Ընտրողաց ծանուցագրեր ղրկեց Քուէարկութեան որոշուած օրէն առաջ, և Ընտրողաց և ընտրելեաց ցուցակները կախել տուաւ թէ Պալատ Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ բակը, և թէ Քարակէօմրիւք Ս. Յոհան Ոսկեբերան Եկեղեցւոյ բակը. բայց ծանուցագրերուն մէկ մասը մերժուեցաւ դժգոհ ընտրողներէն, և Քարակէօմրիւկի Եկեղեցւոյ բակը կախուած ցուցակները պատռուեցան և նշաւակուեցան : Ընտրողական Ժողովը զանոնք վերստին նորոգեց, և Սալմաթօմրուխ Դպրոցին մէջ Քուէարկութիւնը ու Քուէհամարը կատարելով, վերջապէս յաջողեցաւ իր Երեսփոխաններն ընտրելու, թէև Թաղական խորհուրդը կը շարունակէ խռովութեան ալեաց մէջ տատանելու :

Ընտրութիւններն աւարտելէն ետքը յայտնուեցաւ նշանաւոր պարագայ մը, որ Սահմանադրութեան մէջ նախատեսուած էր : Տես Յօդ. 83 : — Նորընտիր 80 Երեսփոխանաց 10ը՝ ամէն մէկը միանգամայն մէկ քանի թաղերէ Երեսփոխան ընտրուած ըլլալով, 24 անձանց տեղ բռնած էին : Եւ որովհետեւ Սահմանադրութիւնը կը տրամադրէ որ այս տեսակ ընտրեալք ո՛ր թաղին Երեսփոխանութիւնը ընդունելնին իրե՛նք պիտի որոշեն, կամ եթէ չուզեն որոշել, Ընդհանուր Ժողովը պէտք է որոշէ վի-

ձևլու, Յանձնաժողովը կը պատուիրէր նախ Ընդհանուր Ժողով գումարել, և եղելութիւնը անոր առջևը ներկայացունելով, անոր հարցունել յիշեալ անձանց թէ ո՞ր Թաղը կ'ընդունին, որպէս զի եթէ իրենք չուզեն որոշել, Ընդհանուր Ժողովը որոշէ։ Բայց ըստ որում գաւառական Երեսփոխաններուն ընտրութիւնը տակաւին լրացած չըլլալով, Ընդհանուր Ժողովոյ միայն 100 անդամք ընտրուած էին, և Ազգին վիճակը կ'ստիպէր որ ժամ յառաջ Ընդհանուր Ժողով գումարուի. և թէպէտ 100ին 14ը հանելով մնացած 86 թիւն ալ բաւական էր օրինաւորապէս Ընդհանուր Ժողով գումարելու (տես յօդ. 82) սակայն կասկածելի էր որ 86 Երեսփոխանք կարենան միշտ ամբողջ կամ գոնէ 71 հոգի գումարուիլ ՚ի Ժողով. ուստի Յանձնաժողովը պատշաճ դատեց Ընդհանուր Ժողով գումարելէն յառաջ վերոյիշեալ տասն անձանց գրել և խնդրել որ օր յառաջ շնորհ ընեն որոշել ո՛ր Թաղին Երեսփոխանութիւնն ընդունելնին։ Յանձնաժողովին խնդիրը լսելի եղաւ. և վերոյիշեալ 10 անձինք իրենց կամքը գրով յայտնելէն ետքը, Յանձնաժողովը անոնց պարապ ձգած Երեսփոխանական տեղերը լեցունելու համար, նոյն Թաղերուն հրահանգ ղրկեց և վերստին ընտրութիւն ընել տուաւ ըստ 7դ Տնօրէնութեան։ Այս երկրորդ անգամի ընտրութեան ժամանակ Յանձնաժողովը ընտրելեաց ցուցակ ալ չը ղրկել պատուիրեց Ընտրողական Ժողովներուն. վասն զի արդէն Կ. Պոլսոյ բոլոր Թաղերուն մէջ ընտրողք ընտելացած էին ընտրական գործողութեանց, և կրնային դիւրաւ որոշել Երեսփոխանական հանգամանքն ունեցող անձինքը։

Աստ կը դնենք Կ. Պոլսոյ բոլոր Թաղերուն Երեսփոխանական ընտրութեանց պատկերը, որ կը ներկայացունէ իւրաքանչիւր Թաղի Ընտրողաց և Քուէ-

արկուաց Թիւերը, Քուէարկութեանց Թուականները Ընտրելոց անունները, մէկ քանի տեղերէ միանգամայն ընտրեալները, անոնց ընդունած Թաղերը, և անոնց քաշուած Թաղերուն մէջ վերստին քուէարկութեամբ ընտրուած յաջորդները։

## ՀԱՆՐԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐ

### ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ Կ. ՊՈԼՍՈՅ ԹԱՂԻՑ

### 1° ԳՈՒՄԳԱԲՈՒ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԸՆՏՐՈՂՔ 613

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 280
" ԵՐԿՐՈՐԴ 23 ՕԳՈՍՏՈՍ — " 280

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Սերվիչէն Էֆէնտի
2. Շիշմանեան Ստեփան պէյ
3. Օտեան Գրիգոր Էֆէնտի
4. Ճրամեան Գէորգ պէյ
5. Շալթօն Գրիգոր Էֆէնտի
6. Շալթօն Մկրտիչ աղա
7. Ճաղուպեան Ճաղուպ Էֆէնտի
8. Զարդարեան Գէորգ աղա
9. Շիլանեան Յովհաննէս աղա
10. Փանոսեան Կարապետ աղա
11. Արշակ Յակոբոս աղա
12. Տօքթէօր Ռուսինեան
13. Այվատեան Մատթէոս աղա

ՀՐԱԺԱՐԵԱԼ

1. Շալթօն Գրիգոր Էֆէնտի

ՅԱՋՈՐԴ

Վերստին Քուէարկութեան առաջին Սեպտ. 6 — Քուէ 162
" Երկրորդ " 15 — " 184

1. Յովակիմեան Յօհաննէս աղա

## 2° ԿԷՏԻԿՓԱՇԱ

### ԸՆՏՐՈՂՔ — 177

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 123
» ԵՐԿՐՈՐԴ 25 » — » 127

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Նորատունկեան Սիմօն աղա
2. Քաքամաճեան Յարութիւն աղա
3. Թօքաթլեան Գրիգոր աղա
4. Մանուկեան Մ. Մանուկ աղա

### ՀՐԱԺԱՐԵԱԼՔ

1. Նորատունկեան Սիմօն աղա
2. Քաքամաճեան Յարութիւն աղա

### ՅԱՋՈՐԴՔ

Վերջին Քուէարկութեան 3 Սեպտ. — Քուէ 87

1. Փրէնկեան Յակոբ աղա
2. Սաքայեան Ալեքսան աղա

## 3° ՆԱՐԼԸՔԱՊՈՒ

### ԸՆՏՐՈՂՔ — 183

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 128
» ԵՐԿՐՈՐԴ 23 » — ՔՈՒԷ 87

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Մինասեան Մկրտիչ աղա
2. Փափազեան Գէորգ ամիրա
3. Սուրէնեան Յօհաննէս էֆէնտի
4. Մուրատեան Գրիգոր աղա

## 4° ՍԱՄԱԹԻԱ Ս. ԳԷՈՐԳ

### ԸՆՏՐՈՂՔ — 446

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ ՔՈՒԷ — 248
» ԵՐԿՐՈՐԴ 25 » » — 191

### ԸՆՏՐԵԱԼՔ

1. Երամեան Գէորգ պէյ

2 · Ասլանեան Ստեփան պէյ
3 · Սէրվիչէն էֆէնտի
4 · Փանոսեան Կարապետ աղա
5 · Գէորգեան Աբիկ աղա
6 · Մուհէնտիսեան Մարտիրոս աղա
7 · Օտեան Գրիգոր էֆէնտի
8 · Սահակեան Սիոս աղա
9 · Տէր Գրիգորեան Պետրոս աղա
10 · Արշակ Յակոբոս աղա

ՀՐԱԺԱՐԵԱԼՔ

1 · Երամեան Գէորգ պէյ
2 · Ասլանեան Ստեփան պէյ
3 · Սէրվիչէն էֆէնտի
4 · Փանոսեան Կարապետ աղա
5 · Օտեան Գրիգոր էֆէնտի
6 · Արշակ Յակոբոս աղա

ՅԱՋՈՐԴՔ

Վերջին Քուէարկութեան առաջին 4 Սեպտ. — Քուէ 142
» երկրորդ 8 Սեպտ. — » 142

1 · Երամեան Կարապետ պէյ
2 · Ծերօնեան Մինաս աղա
3 · Ապրօ Սահակ էֆէնտի
4 · Օտեան Նշան աղա
5 · Տատեան Սիմոն պէյ
6 · Տօքթէօռ Բեաթիպեան

5° ՍԱՄԱԹԻԱ ԵՒՆԻ ՄԱՀԱԼԼԷ ԵՒ ՆԱՐԼԸ ՔԱԲՈՒ

ԸՆՐՈՂՔ — 91

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 57

ԸՆՏՐԵԱԼՔ

1 · Պալեան Սարգիս էֆէնտի
2 · Բաբամաճեան Յարութիւն աղա

## 6. ԹՕՓՐԱՔԱԼԷ

ԸՆՏՐՈՂՔ — 56

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ 23 ՕԳՈՍՏՈՍ ՔՈՒԷ — 44

ԸՆՏՐԵԱԼ

1. Երամեան Աբրահամ պէյ

## 7. ՊԱԼԱՏ, ՍԱՄԱԹՕՍՐՈՒԽ, ՔԱՐԱ ԿԷՕՄՐԻՒՔ *միացեալ։*

ԸՆՏՐՈՂՔ 218.

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ — ՔՈՒԷ 86

» ԵՐԿՐՈՐԴ 8 » — » 96

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Պալթիկեան Խարունակ պէյ
2. Տատեան Ներսէս էֆէնտի
3. Ֆրէնկեան Աբրահամ աղա
4. Նէվրուզեան Աբեթիկ աղա
5. Յովսէփեան Կարապետ աղա

## 8. ԵՅՈՒՊ Ս. ԵՂԻԱ ԵՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ԸՆՏՐՈՂՔ 67 (*միացեալ*)

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 48

ԸՆՏՐԵԱԼ

1. Ալանեան Ստեփան պէյ. — ՀՐԱԺԱՐԵԱԼ

ՅԱՋՈՐԴ

Վերստին Քուէարկութիւն Սեպտ. 6 — Քուէ 48

1. Սուլուխանեան Նիկողոս աղա.

## 9. ԽԱՍԳԵՂ

ԸՆՏՐՈՂՔ 281

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 30 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 128

» ԵՐԿՐՈՐԴ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ » 116

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Աղաթօն Գրիգոր էֆէնտի
2. Սօմճեան (Ն.) Մկրտիչ աղա

3. Քալէնտէրեան Մաթէոս աղա
4. Տէմիրճիպաշեան Յարութիւն աղա
5. Իկիտպաշեան Ասապա աղա
6. Զարագլեան Յակոբ աղա

## 10° ԲԵՐԱ ԵՒ ՔԱՍԸՄՓԱՇԱ (միացեալ)

ԸՆՏՐՈՂՔ — 417

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 23 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 147

" ԵՐԿՐՈՐԴ 30 " — " 163

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Նորատունկեան Յակոբիկ աղա
2. Պուրունսուզեան Յակոբ աղա
3. Տօքթէօռ Ռաֆայէլեան
4. Գիւսակ Թորոս պէյ
5. Եղիազարեան Յովհաննէս աղա
6. Իսթիմարաճեան Գէորգ աղա
7. Մինասեան Վարդերէս աղա
8. Մարկոսեան Գրիգոր էֆէնտի
9. Տօքթէօռ Թաղւորեան
10. Միւհէնտիսեան Մկրտիչ աղա

## 11° ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊԱՅՔՕԶ (միացեալ)

ԸՆՏՐՈՂՔ 45

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 38

ԸՆՏՐԵԱԼ

1. Ասլանեան Ստեփան պէյ. — ՀՐԱԺԱՐԵԱԼ

ՅԱՋՈՐԴ

Վերջին Քուէարկութիւն 10 Սեպ. — Քուէ 33

1. Ալթուն Տիւրրի էֆէնտի

## 12° ՊԱՇԻԿԹԱՇ

ԸՆՏՐՈՂՔ — 156

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 83

" ԵՐԿՐՈՐԴ 23 " — " 78

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Տատեան Յովհաննէս պէյ

2. Պալեան Կարապետ Էմիրա
6. Կրճիքեան Անդրանիկ պէյ

## 13° ՕՐԹԱԳԻՒՂ

ԸՆՏՐՈՂՔ — 226

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 91
" ԵՐԿՐՈՐԴ 23 " — " 58

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Ալեանաքեան Խաչիկ աղա
2. Մինասեան Մինաս էֆէնտի
3. Տամատեան Յակոբ աղա
4. Ճանըմեան Յօհաննէս աղա
5. Եուսուֆեան Յօհաննէս աղա

## 14° ԳՈՒՐՈՒՉԷՇՄԷ

ԸՆՏՐՈՂՔ — 58

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 42
" ԵՐԿՐՈՐԴ 23 " — " 37

ԸՆՏՐԵԱԼ

1. Կիւմիւշճեան Գասպար աղա

## 15° ՀԻՍԱՐ· ՊՕՅԱՃԸԳԻՒՂ (Գաւառ)

ԸՆՏՐՈՂՔ — 48

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 41

ԸՆՏՐԵԱԼ

1. Մուպահեաճեան Յակոբ աղա

## 16° ՍԹԷՆԻԱ ՆՈՐ ԳԻՒՂ ԵՒ ՊԷՕՅՈՒՔ ՏԷՐԷ (Գաւառ)

ԸՆՏՐՈՂՔ — 50

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ 18 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 37

ԸՆՏՐԵԱԼ

1. Նէվրուզեան Յովակիմ աղա

## 17. ԳԱՆՏԻԼԻ, ՎԱՆԻ ԳԻՒՂ (գաւառ)

ԸՆՏՐՈՂՔ — 86

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 55
» ԵՐԿՐՈՐԴ 28 » — » 53

ԸՆՏՐԵԱԼՔ

1. *Մուհէնտիսեան Յովհաննէս աղա*
2. *Մինասեան Մինաս էֆէնտի*

ՀՐԱԺԱՐԵԱԼ

1. *Մինասեան Մինաս էֆէնտի*

ՅԱՋՈՐԴ

Վերստին քուէարկութեան առաջին 8 Սեպ. — Քուէ 47
» » երկրորդ 12 » — » 50

1. *Շզարէկեան Սարգիս աղա*

## 18. ԳՈՒԶԳՈՒՆՃՈՒԽ ԵՒ ԻՃԱՏԻԷ (գաւառ)

ԸՆՏՐՈՂՔ — 78

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 54
» ԵՐԿՐՈՐԴ 23 » — » 51

ԸՆՏՐԵԱԼՔ

1. *Ասլանեան Ստեփան պէյ*
2. *Ներսէսեան Գրիգոր աղա*

ՀՐԱԺԱՐԵԱԼ

1. *Ասլանեան Ստեփան պէյ*

ՅԱՋՈՐԴ

Վերստին քուէարկութեան առաջին 3 Սեպ. — Քուէ 40
» » երկրորդ 8 » — » 50

1. *Եազմաճեան Աւետիս աղա*

## 19. ԻՒՍԿԻՒՏԱՐ Ս. ԽԱՉ

ԸՆՏՐՈՂՔ — 167

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 72
» ԵՐԿՐՈՐԴ 23 » — » 56

ԸՆՏՐԵԱԼՔ

1. *Պէհզատ Ումէտ աղա*

2. Պէշլէրեան Յակոբ աղա
3. Օտեան Գրիգոր էֆէնտի
4. Գրասէրեան Գաբրիէլ աղա

ՀՐԱԺԱՐԵԱԼ

1. Օտեան Գրիգոր էֆէնտի

ՅԱՋՈՐԴ

Վերջին Քուէարկութեան առաջին 3 Սեպ. — Քուէ 43
" " երկրորդ 6 " — " 64

1. Նորատունկեան Գրիգոր աղա

## 20. ԽՕՍԿԻՏԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

ԸՆՏՐՈՂՔ — 195

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ 19 ՕԳՈՍՏՈՍ — ՔՈՒԷ 97
" ԵՐԿՐՈՐԴ 25 " — " 130

ԸՆՏՐԵԱԼՔ

1. Գօզօլեան Ղուկաս աղա
2. Նորատունկեան Սիմոնիկ աղա
3. Սարուխանեան Յարութիւն աղա
4. Ընկեանցի Յարութիւն աղա

---

Յանձնաժողովն այս ընտրութեանց ամենուն Յայտագիրները թէ Ընտրողական ժողովոց և թէ Տեսչաց կողմէն ընդունելով, անոնց օրինաւորութիւնը ստուգեց, և ընտրելոց ամեն մէկուն ընտրելութեան պայմանները քննելու համար՝ անոնց ցանկը Ազգային Պատրիարքարան ղրկեց և խնդրեց որ Խառն ժողովը՝ Քաղաքական ժողովին տեղապահութեամբ ( Յօդ. 81 ) անոնց ջաղջախեան վճիռը ստուգէ։

Յանձնաժողովն այս խնդրոյն տակաւին լիովին պատասխան ընդունած չըլլալով, հարկ չտեսաւ Երեսփոխանաց համար պահանջուած ընտրելութեան ուրիշ հանգամանքները ( Յօդ. 68 ) խուզարկել, մանաւանդ

*որ այսպիսի խուզարկութիւն մը ինքնին խիստ դժուար ըլլալէն զատ, արդիւնքը՝ ընտրութեանց անվաւեր համարուելու բաւական պատճառ չ՚ընծայելուն կանխաւ իսկ համոզուած է :*

*Եւ որովհետեւ Սահմանադրութեան 82դ յօդուածոյ ոգւոյն համեմատ Ընդհանուր Ժողովին իր առաջին անգամ գումարուելուն պարտաւոր է ընտրութեանց օրինաւորութիւնը ստուգել, Յանձնաժողովը պատշաճ դատեց ընտրելոց ցանկը Պատրիարքական Տեղապահի ղրկել եւ խնդրել որ զանոնք հրաւիրէ Ընդհանուր Ժողովոյ ատեան կազմել որոշեալ օր մը Եկեղեցական Երեսփոխանաց հետ :*

*Եկեղեցական Երեսփոխանաց ընտրութեան համար արդէն Յանձնաժողովը աշխարհական Երեսփոխաններէն առաջ 14 Եկեղեցականներէ բաղկացեալ Ընտրողական Ժողով մը կազմեր, եւ մասնաւոր Հրահանգանոյն Ժողովոյ ձեռօք Կոստանդնուպօլիս գտնուող բոլոր* Եկեղեցականաց *ցանկը, եւ 20 Եկեղեցական Երեսփոխանաց եռապատիկ թուով 60 ընտրելեաց ցուցակը պատրաստել տուեր էր :*

*Յանձնաժողովն այս ցուցակէն 200 օրինակ եւ 200 ալ ծանուցագիր ու Քուէթուղթ տպել տալով Ընտրողական Ժողովին յանձնեց, որ ընտրողաց ցրուելով զանոնք Քուէարկութեան հրաւիրեց 'ի Մայր Եկեղեցի Օգոստոս 10 շաբաթ օր ժամը 2էն մինչեւ 5, քուէնին անձամբ բերելու, կամ ստորագրեալ նամակաւ ղրկելու պայմանաւ : Այս ծանուցագրերուն մէջ Յանձնաժողովը մասնաւոր զգուշութիւն ըրաւ ընտրողաց յայտ առնել որ իրենց ընտրելու 20 Երեսփոխանները թէ Եպիսկոպոսներէն, թէ Վարդապետներէն եւ թէ Քահանայներէն, հարկ է որ Սահմանադրութեան 57դ յօդուածին պահանջած հանգամանքն անթերի ունենան. որ են Ա. դուրսերը պաշտօն չ՚ունենալ, Բ. հա-*

սակաւ 30 տարին լրացուցած ըլլալ. 3. գոնէ 5 տարի առաջ ձեռնադրուած ըլլալ, և Դ. որևէ դատաստանի տակ չ'գտնուիլ:

Յիշեալ օրը Քուէարկութիւնը կատարեցաւ ամենայն օրինաւորութեամբ 'ի ներկայութեան Յանձնաժողովին կողմէն Տեսչի մը, և նոյն օրը բացարձակ առաւելութեամբ միայն 12 անձինք ընտրուած ըլլալով, մնացած 8 Երեսփոխանաց համար ալ երկրորդ Քուէարկութեան մասնաւոր ծանուցագիր և քուէթուղթ ղրկուեցաւ ընտրողաց, և այն ալ կատարեցաւ հետևեալ հինգշաբթի օրը ժամը 1 էն մինչև 4, դարձեալ միևնոյն եղանակաւ և միևնոյն Տեսչին հսկողութեամբը: Ահաւասիկ ընտրութեանց պատկերը, որոյ արդիւնքն Ընտրողական ժողովականաց ստորագրութեամբ վաւերացեալ յանձնուեցաւ Յանձնաժողովին:

## ՊԱՏԿԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԸՆՏՐՈՂՔ — 213

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ | ԱՌԱՋԻՆ | ՕԳՈՍՏՈՍ | 10 — | ՔՈՒԷ | 187 |
| „ | ԵՐԿՐՈՐԴ | „ | 15 — | „ | 193 |

### ԸՆՏՐԵԱԼՔ

1 Նախկին Պատրիարք Սարգիս Արքեպիսկոպոս
2 Իսահակ Եպիսկոպոս
3 Ներսէս Եպիսկոպոս
4 Յօհաննէս Վարդապետ Սեթեան
5 Աբրահամ „ Սամաթիոյ
6 Մեսրոպ „ Իւսկիւտար Ս. Կարապետի
7 Կարապետ „ Պատրիարքական փոխանորդ
8 Տէր Գէորգ Մայր Եկեղեցւոյ
9 „ Արիստակէս Սամաթիոյ

10 Տէր Յօհաննէս Իւսկիւտար Ս. Խաչի
11 " Գէորգ Խասգիւղի
12 " Յօհաննէս Հիւնքեարպէյէնտեան
13 Յովհաննէս Եպիսկոպոս Կապուտիկեան
14 Տէր Պաղտասար Իւսկիւտար Ս. Կարապետի
15 " Յովհաննէս փոքր Մայր Եկեղեցւոյ
16 " Յարութիւն Գալատի
17 " Գրիգոր Աճէմեան Պէյօղլուի
18 " Գաբրիէլ Պէյօղլուի
19 " Բարսեղ Խասգիւղի
20 " Փիլիպպոս Սամաթիոյ

## Է. ԳԱՒԱՌԱԿԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՔ

Յայտնի է որ Սահմանադրութեան կատարելապէս գործադրութիւնը ոչ միայն Կոստանդնուպօլսոյ Թաղական խորհրդոց և Եկեղեցական և աշխարհական Երեսփոխանաց ընտրութեամբը, այլև Գաւառական խորհրդոց և ժողովոց և Երեսփոխանաց ընտրութեամբը և հաստատութեամբը կրնայ ըլլալ։

Յանձնաժողովն ասի չէր կրնար չ՚գիտնալ. բայց Սահմանադրութեան 96, 97 և 98դ յօդուածները որ Ազգային Գաւառական վարչութեան կազմութիւնը և եղանակը կը տրամադրեն, քիչ խօսքով այնքան շատ բան կը տնօրինեն, որ Յանձնաժողովը չէր կրնար զանոնք ամէնը գործադրելու կարող ըլլա՛ն անգամ երևակայել։

Ուստի Յանձնաժողովը Գաւառական վարչութեան կազմութեանը համար ձեռնարկեց միայն այն տնօրէնութեանց որ յաջողելու յոյս կ՚ընծայէին, և որ են։

1. Յանձնաժողովը Սահմանադրութեան տպագրութենէն անմիջապէս ետքը, ամէն մէկ Գաւառի Առաջնորդաց և ժողովրդեան բաւական օրինակ ղրկելով,

շրջաբերական գրութեամբ հրաւիրեց Գաւառաբնակ մերազնեայս Վեհափառ Կայսեր բարեմաղթութեան և շնորհակալութեան հանդէս կատարել ամենայն խաղաղութեամբ :

2 . Գաւառական Ա. Տնօրէնութիւն մը հրատարակեց, և ղրկեց գլխաւոր Գաւառներուն՝ առ Առաջնորդն և Ժողովականս ուղղելով : Այս Տնօրէնութիւն Յանձնաժողովն Առաջնորդին հրաւէր ըրաւ իր նախագահութեամբ Օգնական ժողով մը կազմել Ուսմնադրութեան գործադրութեան համար, վիճակայիններէն 2 Եկեղեցական և 5 աշխարհական ուսումնասէր և աշխատասէր անձինք ընտրելով, և կամ եթէ վիճակին մէջ օրինաւոր Ազգային ընդհանուր ժողով կայ, անոր ընտրել տալով.

3 . Օգնական ժողովին պատուէր ըրաւ վիճակին բոլոր քաղաքներուն և գեղերուն մէջ մանաւոր Բաղն ժողովուրդ ունեցող Եկեղեցիներուն ցանկը շինել, և ամեն մէկուն մէկ մէկ Թաղական խորհուրդ կազմելու համար, նախ և առաջ բնակչաց թուոյն համեմատութեամբ իւրաքանչիւր Խորհուրդին քանի՞ հոգիէ բաղկանալիքը սահմանել, և Բ. Թաղին պատուաւոր բընակիչներէն երեքական հոգի որոշելով, Եկեղեցւոյ Աւագերէցին նախագահութեամբը Ընտրողական ժողով կազմել. և Գ. իր մէջէն Տեսուչներ որոշելով, Թաղերը ղրկել և Թաղական խորհրդոց ընտրութիւնը տնօրինել ըստ Ազգային Սահմանադրութեան :

Յանձնաժողովն այս ընտրութեան վերաբերեալ բոլոր պարագայից վրայ մանրամասն և ամենապարզ հըրահանգ ղրկեց Օգնական ժողովներուն, և խնդրեց որ մէկ կողմէն Թաղական խորհրդոց ընտրութեանը հոգ տանելով, միւս կողմէն ալ սա հարցմանց պատասխանելու համար պէտք եղած տեղեկութիւնները ընեն ընդ խնամօք Առաջնորդաց :

1. Վիճակին մէջ քանի՞ հայ կայ, այր ։

2. Թէ՛ քաղաքը և թէ՛ գեղերը քանի՞ ազգային կան Տէրութեան տուրք վճարող, և անոնցմէ քանի՞ հոգի կան Ա. Բ. և Գ. կարգի տուրք տուողներ. այսինքն ալա, էվսաթ և էտնա. (այսպէս մեկնեցին Ա. և Բ. և Գ. բառերը՝ Բարձրագոյն Դրան Յանձնաժողովին այն անդամները որ Գործադիր Յանձնաժողովին հարցմանց պատասխանեցին)։

3. Վիճակին Գաւառական ընդհանուր ժողովը ի՞նչ կերպով և քանի՞ հոգիէ կազմուած էր յարմար կը թուի Սահմանադրին և Օգնական ժողովին ։

Այս հարցումներն ուղղելով, Յանձնաժողովս միայն ուներ ընդունած պատասխաններուն համեմատ 1. սահմանել իւրաքանչիւր Գաւառի Ընդհանուր ժողովոյ անդամոց թիւը, և կազմութեան կերպը. և 2. նոյն Ժողովոց ընտրութեան անօրէնութիւն ընել ։

Անկէ ետքը կարգը կուգար Գաւառական Երեսփոխանաց ընտրութեան, որոնք թուով 40 և իւրաքանչիւր Գաւառի բնակչաց թուոյն համեմատ Գաւառաց բաշխուած ըլլալով, Գաւառական Ընդհանուր ժողովներէն պիտի ընտրուին ։

Այս ամէն ընտրութեանց համար Յանձնաժողովը հետզհետէ Տնօրէնութիւններ պիտի ընէր, և գործադրութեանը հոգ տանելով, Կոստանդնուպոլսոյ Ազգային Երեսփոխանական ընդհանուր ժողովին ամբողջացունելէն ետքը՝ Գաւառական վարչութեան խորհրդոց, Ժողովոց, Դիւանատան ևայլն, մանաւանդ որ հրահանգներ պիտի տար, և պիտի փոյթ տանէր Գաւառական ազգային վարչութիւնը Պոլսոյ Վարչութեան տրամադրութեանցը համաձայնեցունել, ինչպէս որ Սահմանադրութիւնը կը յուսադրէ ։

Բայց Յանձնաժողովը մինչև ցայսօր միայն Պոլսոյ վիճակէն կրցաւ իր հարցմանց պատասխանն ընդունել.

ւյն ալ դժբաղդաբար քաղաքին հրոյ ճարակ ըլլալուն լոյն հետ մէկտեղ. այնպէս որ նոյն վիճակին համար ժամանակ մը ուրիշ Տնօրէնութիւն ընելու յոյս չմնաց։

Իսկ միւս գաւառներէն տակաւին լուր չեկաւ, և ոչ իսկ Զմիւռնիայէն և Անդրիանուպոլսէն, ուր որ Յանձնաժողովին Տնօրէնութիւնները աւելի դիւրութեամբ գործադրուելու պատեհութիւն ունէին,

Այս խնդրոյն վրայ Յանձնաժողովը պարտ կը համարի յայտնել որ ըստ իւր կարծեաց՝ Գաւառաբնակ մերազնեայց մէջ Սահմանադրութիւնը հաստատելու ուրիշ հնար չկայ, այլ բանիբուն և անձնանուէր անձինք. աշխարհականաց կամ լաւ ևս Եկեղեցականաց դասէն Տեսուչ կարգել, և Կ. Պոլսոյ մէջ պէտք եղած վարժութիւնն ու հրահանգը անոնց տալով, ղրկել Առաջնորդական վիճակները մի զմիոյ կնի սահմանադրելու, իւրաքանչիւր Վիճակի Օգնական ժողովոյ աջակցութեամբը։

## Բ. ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒՐՔ

Արդէն յայտնեցինք որ Գործադիր Յանձնաժողովը չուզեց Սահմանադրական նորընտրելի Վարչութեան և Ազգային Ընդհանուր ժողովոյ իրաւասութեանը դըպչելով Ազգային ընդհանուր տուրք հաստատել և հաւաքել, ինչպէս որ իրեն յորդոր կ'ընէին ազգասէր անձինք՝ Ազգին օգտին նախանձախնդրութեամբ։

Բայց Յանձնաժողովը չուզեց նաև բոլորովին անտարբեր կենալ Վարչութեան առաջին քայլափոխին կրելիք դժուարութեանց առջին, այլ անոր դրամական ծառայութիւն մը ընելով, աշխատութիւնը դիւրացունել, և Սահմանադրութեան այս կերպով ալ հաստատութեանը օգնել իրեն պարտք համարեց. և ընտրական պատրաստութիւնները տնօրինելու միջոցին՝ դրամական պատրաստութեան ալ ձեռնամուխ եղաւ։

Այս նպատակաւ Յանձնաժողովը՝ ինչպէս արդէն յայտագրեցինք, Կոստանդնուպոլսոյ բոլոր Թաղերուն մէջ Առժամանակեայ գանձապետներ կարգեց, բոլոր Երեսփոխանական ընտրողաց տոմսակ ուղղեց, և ընդհանրապէս ամենէն 75 ղուրուշի նպաստ մը խնդրեց իբր Թերհաշիւ իւրաքանչիւր անհատէ այս 1863–64 տարուան Ընդհանուր տրոց. և նախկին Թաղական գործակալաց, և նաև նորընտիր Խորհրդոց յորդոր մատոյց զընտրողս շահեցողութեամբ յիշեալ նպաստը հատուցանելու ստիպել:

Այս կերպով Թաղերուն ամենուն մէջ քիչ շատ ստակ ժողվուեցաւ, Թաղական Խորհրդոց ընտրութեանէն առաջ և ետքը, մանաւանդ Երեսփոխանական բաշխման ցուցակը պատրաստուելու օրերը, և Քուէարկութեանց միջոցին:

Յանձնաժողովը մինչև այս վերջին օրերս առանց հաշիւ տեսնելու ձգեց որ իւրաքանչիւր Թաղ իր բաժինը ճոխացունելու աշխատի. բայց այս շաբթու մէջ բոլոր Գանձապետներն հրաւիրելով, իւրաքանչիւրէն առաւ 75 ղուրուշ վճարող անձանց ցուցակը, ժապաւինեալ անդորրագիրներուն հաշիւը տեսաւ, և անոնցմէ աւելցածներն առնելով, հաւաքուած ստակը յանձնելու համար Գանձապետներն ուղղեց Ընդհանուր գանձապետ Պերճաշուք Արամեան Գէորգ Պէյին:

Ահա կը ներկայացունեմք իւրաքանչիւր Թաղի 1863–64 տարուան ընդհանուր տրոց Թերհաշիւ վճարած 75 ղուրուշի նպաստին ցուցակը:

| ԹԱՂ | ԸՆՏՐՈՂՔ | ՂՐՇ |
|---|---|---|
| 1. Մայր Եկեղեցի Գումքաբու | 348 | 26100 |
| 2. Կէտիք բաշա | 132 | 9900 |
| 3. Եէնի.քաբու | 154 | 11550 |
| 4. Սամաթիա Ս. Գէորգ | 235 | 17625 |
| 5. » Ս. Յակոբ | 18 | 1350 |
| 6. » Ս. Յօհաննէս | 23 | 1725 |
| 7. Թօբ.քաբու | 29 | 2175 |
| 8. Պալատ, Սալմա" և Թարաքէօմ" | 93 | 6975 |
| 9. Էյուպ(*) | . . . | . . . |
| 10. Խասգիւղ | . . . | . . . |
| 11. Բերա և Գասըմբաշա | 152 | 11400 |
| 12. Ղալաթիա | 11 | 825 |
| 13. Պէշիկթաշ | 107 | 8025 |
| 14. Օրթագիւղ | 101 | 7575 |
| 15. Գուրուչէշմէ | 44 | 3300 |
| 16. Հիսար | 18 | 1350 |
| 17. Պօյաճը գիւղ | 18 | 1350 |
| 18. Սթէնեա Եէնիգեղ | 27 | 2025 |
| 19. Պէյքօզ | 5 | 375 |
| 20. Գանտիլլի | 8 | 600 |
| 21. Գուզկունճուք և Իճատիյէ | 44 | 3300 |
| 22. Իւսկիւտար Ս. Խաչ | 74 | 5550 |
| 23. " Ս. Կարապետ | 100 | 7500 |
| 24. Գատըգեղ | 40 | 3000 |
| | 1781 | 133575 |

(*) Էյուպ և Խասգեղ տակաւին չկրցան տալ իրենց հաշիւները։

Տեղեկագիրս վերջացունելէն առաջ, Յանձնաժողովը հարկ կը տեսնէ նաև յայտնել որ իր պաշտօնին կատարմանը համար զանազան Տնօրէնութեանց, անդորրագիրներու, ծանուցագրերու, ցուցակներու եայլն, և մանաւանդ Սահմանադրութեան և Տեղեկա-

գրիս տպագրութեան բաւական ծախք ընելու պար-
տաւորեցաւ ․ բայց բարեբաղդաբար Ազգային Սահմա-
նադրութիւնը այս ծախուց մէկ մասին փոխարինեց , և
Կ․ Պօլսոյ Թ․աղական խորհուրդներուն գրեթէ ամէնն
ալ Քուէարկութեանց վերաբերեալ ծանուցագիրնե-
րուն , ցուցակներուն և այլն , տպագրական ծախքը հա-
տուցին ։ Եւ Թէպէտ Յանձնաժողովը տակաւին պարտք
ունի Տպարանի , բայց անոր փոխարէն Սահմանադրու-
թեան տետրակէն պատրաստ կայ 1509 օրինակ , որ
հետզհետէ ծախելով կրնայ այս պարտքը գոցել և
աւելնալ ։

Արդ , Ամենապատիւ Սրբազան Պատրիարքական
Տեղապահ և Գերապատիւ Հարք և Տեարք ․

Սահմանադրութեան Գործադիր Յանձնաժողովին
անօրինած գործերը լսեցիք ։ Ինչպէս յայտնի կ'երևի ,
ասոնք մեծ բաներ չեն , և հազիւ առաջին քայլ մը կրնան
համարուիլ 'ի հաստատութիւն Սահմանադրութեան ․
բայց գիտէք Տեարք , որ ամէն բանի մէջ առաջին
քայլն է դժուարինը , անկէ ետքը փորձն ու վարժու-
թիւնը օգնութեան կը հասնին աշխատողին , որ կրնայ
դիւրաւ հասնիլ նպատակին՝ եթէ աշխատութիւնը
յարատևէ ։

Այս Յանձնաժողովն առաջին քայլն առաւ , և ան-
կեղծաբար խօսելով , ոչ ինքեան զօրութեմբը միայն ,
այլ շատ ազգասէր և բանիբուն անձանց խորհրդովն ու
օժանդակութեամբը ․ որոնց մէջ մանաւոր յիշատակու-
թեան և յատուկ շնորհակալութեան արժանի հանդի-
սացան Սերվիչէն էֆէնտին , Մամուրեան Մատթէոս ,
Փափազեանց Ստեփան , Յուսուֆեան Տիգրան և
Տ․ Պօղոսեան Գալուստ Աղաները , և Թաղական և
Երեսփոխանական ընտրութեանց Տեսչութիւն ընել
յանձն առնող պատուարժան անձինքը ։ Ասոնց և նը-

մանեայ աշխատասիրութեամբ Յանձնաժողովը կրթա- դժուար պարագայից մէջ յաջողութեամբ պսակել իր Տնօրէնութիւնները ։ Աստի սոա հրապարակաւ կը մատուցանէ անոնց իր շնորհապարտ սրտին զգացմանց հաւաստիքը ։

Իսկ դուք, Ամենապատիւ Սրբազան Տէր, երկու- տարիէ ՚ի վեր Ազգին տատանելի վիճակին մէջ անշա- հախնդիր ոգւով անոր շնորհ բրած խնամնիդ այս ան- դամ պսակեցիք մեզի հետ վեց ամիս շարունակ աշ- խատակցելով, և դիմագրաւ մարտնչելով այն ամեն դժուարութեանց դէմ՝ որ Ազգին սիրելի Սահմանա- դրութեան հաստատութիւնը՝ Ազգին իր ձեռօք դըժ- ուարին և անհնարին ընել կը նկրտէին ։ Դուք ալ Վե- հափառ Տէր, ընդունեցէք մեր շնորհակալու սրտին խորին յարգանքը, և թող տուէք որ խնդրեմք Ձեզմէ ներողամտութիւն մեզ, և բարեմաղթութիւն այս ազգասէր խումբին համար՝ զոր պատիւ ունիմք ներկա- յացունելու Ձեզ՝ իբրև Ընդհանուր Ժողով Հայ Ազ- գին Երեսփոխանութեան ։

Արդ, Բարձրապատիւ Երեսփոխանք, ահա Սահ- մանադրութիւնը Մայրաքաղաքիս մէջ գործադրե- լով, կը փութամք Ձեզ յանձնել այն պաշտօնը, զոր Ձեր նախորդը մեզ աւանդեց. ահա Ձեզ փոքրիկ գումար մըն ալ ստակի, զոր Ազգը Ձեզ ընտրելու ա- տեն մեզ յանձնեց որ Ձեզի տանք, որպէս զի Վար- չութիւնը որ պիտի կազմէք՝ իր առաջին քայլափոխին չ'թոթովի ։ Ազգը մեծ յուսով և իրաւացի ակնկա- լութեամբ Ձեր վրայ կը նայի, և բերկրութեամբ սրտի Ձեր այսօրուան առաջին նիստը շնորհաւորելով, ան- քթիթ աչօք զՁեզ և Ձեր շարժումները կը դիտէ, ո- րոնցմէ կախեալ են իրեն նիւթական, բարոյական և մտաւորական յառաջադիմութիւնը ։ Ո՛ն ուրեմն Տեարք, գործելու ժամանակն եկած է. ձեռք առէք Ազգային

*նաւուն ղեկը, և զայն դէպ 'ի յառաջադիմութիւն ուղղեցէք։ Մենք կը հրաժարինք, բայց կը խնդրեմք որ հաստատապէս գիտնաք թէ միշտ բարեմաղթու եմք Ձեզ առ 'ի յաջողութիւն*

*և մնամք Ազգիս*

## ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ԾԱՌԱՅՔ ԱՆԴԱՄՔ ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՏԻՐՐԻ
ԱՃՆԱՆԵԱՆ ՊՕՂՈՍ
ԱՍԼԱՆԵԱՆ ՄԱՆՈՒԿ
ԱՍԼԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ *Ատենապետ*
ԳԻՍԱԿ ԹՈՐՈՍ
ՄԱՐԿՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ
ՆԷՎՐՈՒԶԵԱՆ ՅՈՎԱԿԻՄ

1863 Սեպտ. 20

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
*Ատենադպիր*

[illegible]



Գին 10 ղուրուշ։

2013